

Ռուսիան Եւրոպայան

# ԾԵՐԵՆԿ



Ուսումնասիրությունը նվիր-  
ված է XIX դարի երկրորդ կեսի  
արևմտահայ նշանավոր գործիչ  
Մերենցի (Հ. Շիշմանյան) հա-  
սարակական գրական գործունեու-  
թյան համառոտ բնութագրմանը:  
Առանձին ուշադրություն է դար-  
ձրված ազգային-ազատագրական  
շարժման, հայ ժողովրդի միաս-  
նության և փառական լուսավո-  
րական զարգացման գործում հե-  
ղինակի կատարած ակտիվ դե-  
րին: Յույց է տրված Մերենցի  
ստանձնահատուկ դերը պատմա-  
կան վեպի նոր սկզբունքների  
մշակման մեջ:



# ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

10(30)





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
Институт литературы и.и.М.Абегьяна

*Рузан Нанумян*

# Церенц

Издательство АН Армянской ССР  
ЕРЕВАН · 1961

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ.Ա.ԲԵՂՅԱՆԻ ԻՄԱՆԻ ԳՐԱԽԱՆԱԿԱՆ ԴԻՎԻԶԻՍԻՍ

Ռուսական Նամուսնան

891.99.092 [Շերեշյ]

ՇԵՐԵՇՅ


1794

Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ • 1961




Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների  
ակադեմիայի Խմբագրական-հրատարակչական  
խորհրդի որոշմամբ:

165/1



ԾԵՐԵՆՅ







Նշանավոր պատմավիպասան Մերենցը աչքի բնկնող դեր է կատարել անցյալ դարի 50—70-ական թվականների արևմտահայ գրական կյանքում:

Հանդես գալով որպես հրապարակախոս և հասարակական գործիչ, նա արժարժում է լուսավորական գաղափարներ, պայքար է մղում ազգային պառակտման դեմ, դառնում «հակահասունյան» շարժման պարագլուխ:

1848 թվականի ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիան, իտալական ազգային-ազատագրական շարժումները, ապա 60-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական կյանքի իրադարձությունները ազդում են Մերենցի լուսավորական աշխարհայացքի վրա, բնդլայնում նրա բմբռնումները ազգային շարժման հարցերի վերաբերյալ:

70-ական թվականների վերջին գրած պատմա-  
ախելերում նա արտացոլում է անցյալում օտարեր-  
կրթյա բռնակալության դեմ ծառայած հայ ժողո-  
վրդի ազգային-ազատագրական շարժումները,  
ստեղծում ժողովրդական ապստամբի կերպարը,  
ներա միջոցով դրսևորելով ժողովրդական շարժման  
ուժը ազատագրական պայքարում:

Ծերենցի վեպերում արծարծված գաղափար-  
ները նոր աստիճանի են բարձրացնում ազգային-  
ազատագրական տենդենցներով և հայրենասիրա-  
կան շնչով հագեցված հայ պատմավիպասանու-  
թյունը:

Հովսեփ Շիշմանյանը (Ծերենցը) ծնվել է 1822 թ. սեպտեմբերի 16-ին Պոլսում, կաթոլիկ հայի ընտանիքում: Գրողի արխիվում պահպանվող կենսագրական գրառումները լրացնում են հրապարակախոսի և գրողի հարուստ կյանքի մինչ այժմ անհայտ մի շարք էջեր: Հիշելով իր մանկության տարիները, Ծերենցը գրում է. «Որք՝ մորմն Յ տարեկան, հորմն 11 տարեկան անցուցեր եմ տղայությունս և պատանեկությունս տարուրեր, տարտամ, շունենալով սովորաբար որևիցե ապահովություն վաղվան ապրուստին համար»<sup>1</sup>:

Մի տարի ուսանելով Օրթագյուղի կաթոլիկական «Լուսավորչյան վարժարանում», 1831 թ. ուղարկվում է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ<sup>2</sup>:

1 ԴԱԹ, Ծերենցի ֆ., № 22, էջ 24:

2 ԴԱԹ, Ծերենցի ֆ., № 16, էջ 1:



«Սա տողերիս գրողը, — պատմում է Ծերենցը, իր հիշողություններում վերհիշելով հորից բաժանման պահը, — որ իր հոր խստութենին զատ ուրիշ բան մը չէր նշմարած մինչև այն բաժանման օրը, ղինքը առանձին սենյակ մը տանելով «որդյակ (առաջին անգամ որդյակ բառը լսած էր իրմե) հիշե մայրդ, մի մոռանար աղոթելու իրեն հոգվույն համար, և ես թե որ մեռնիմ մի մոռնար աղոթել և ինձի համար...» քսիր էր և իր սրտին հուզմունքը և ձայնին տխրությանը և աչքերուն փայլը ծածկելու համար թողեր տղան և հեռացիր էր: Վասնղի արևելք արցունքի տխրության երևույթը ան ատեն մեծ ամոթ էր»<sup>1</sup>:

Ծերենցը նկարագրում է ս. Ղազար կղզին, որ «բանտ» է համարում: Աշակերտներն իրենց դասատուներից բացի ոչ ոքի հետ շփվելու իրավունք չունենին: Սովորում էին գրաբար, քրիստոնեության և հայ եկեղեցու պատմությունը, լատիներեն և հունարեն: Անվերջանալի աղոթքներն ու մաղթանքները, դրանց հետ և խստաբարո վերակացուի հալածանքները ծանր ներգործություն են ունենում «անսաստ և կրակոտ» պատանու վրա: Չգիմանալով վանական ռեժիմին, նա որոշում է Նոր ընծայարանը ավարտելուն պես, թողնել միաբանությունը և վերադառնալ աշխարհիկ կյանքին:

Մխիթարյան վարդապետներից նրա վրա առանձին տպավորություն է թողնում Հ. Պ. Մինաս-

---

1 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 16, էջ 2:



յանը, որը, եկեղեցու պատմութեան ժամերին, պատանիների մեջ սերմանում էր ազգային ինքնագիտակցութեան զգացումներ: «Իր պատմութեանն հանդիմանալով, — գրում է Մերենցը, — որ մենք ահա հենք եղեր և մեր բուն երկիրը Պոլիսը չէ եղեր, այլ Հայաստան և թե մենք ալ երբեք թագավորներ ունենք եղեր և թե մեր նախահարքը քաջ մարդիկ են եղեր և թե մեր անմիաբանութեան պատճառով ամեն բան կորուսել ենք և հիմա գերի եղեր ենք օտարաց: Ասոնք ամենքը այդ պատմական մարդը մեզի կիմացներ ի Տրդատա, Տիգրանա և Վարդանա պատմութեաններով»<sup>1</sup>: Կրօնական շաղախով տրված հայ ժողովրդի պատմութեանն իր հետքերն է թողնում պատանի վանականի վրա: Նրա հոգում բողբոջում է սեր իր ազգի և բուն հետաքրքրութեան: Նրա պատմական անցյալի նկատմամբ: Շուտով նա հեռանում է Վենետիկից, բախտ որոնելու աշխարհիկ կյանքի բազմաթիվ դժվարութեանների մեջ:

1837 թվականի նոյեմբերին Մերենցը երկու դասընկերների հետ, որոնցից մեկը Սերոբեն էր՝ Ղևոնդ Ալիշանի եղբայրը, գալիս է Պոլիս: Զրկված լինելով ծնողներից, նա ժամանակավորապես տեղավորվում է ազգականների տանը և որոշում հետևել «Գուզդունջուկի» համալսարանի դասընթացներին: Սակայն նա շատ շուտով զգում է, որ արա-

1 ԳԱԹ, Մերենցի ֆ., № 16, էջ 4:

ջին հերթին պետք է մտածել ապրուստի միջոցներ հայթայթելու մասին: Թողնելով սովորելու միտքը, նա շարաթական շորս ղուրուշով տեղավորվում է խտալացի մի դեղագործի մոտ որպես աշակերտ: «Կարդալու սեր չափազանց ունեի,— գրում է նա վերհիշելով այդ օրերը,—բայց ու՞ր էր գիրք և, եթե ձեռքս անցներ կղզուայի, որ վերջին գլխուն պիտի հասնիմ: Ին՛չ մխիթարություն դեռ տասնեհինգ տարվույն չի հասած պատանվույն մը համար, որ զրականության համը միայն առած, նովալ կոռչորեր և չի կար ոք յուր ճաշակաց հարմար, որուն հետ կարենալ տեսնիլ, խոսիլ և իր լեզուն հասկանալ»<sup>1</sup>:

Մերենցը դալով Պոլիս ականատես է լինում հայությունն այդ տարիների տնտեսական ծանր կացությանը: Թուրքական բեյերը և հայ ամիրաները ֆինանսական կախման մեջ զնելով պետությանը, իրենց ձեռքն էին վերցրել պետական-զրամական շրջանառությունը և նորանոր հարկերով խեղդում էին ժողովրդին: Ամիրաների գերիշխանությունը քաղաքական ներգործություն է ունենում հայ արհեստավորական և գյուղացիական խավերի վրա: «Բայց երկրի նյութական ու բարոյական վիճակն ինձի ամենեն ավելի տրամոթյուն և տանջամուլն տխրություն կպատճառեր,— գրում է նա,— կտեսնեի

---

<sup>1</sup> ԳԱԹ, Մերենցի ֆ., № 18, էջ 1:



որ ստակի նեղության խոսքը կար ամենուն բերանը: Ամեն մարդ իր վաստակին դանդատ կառնէր: Ինձ տարեկից պատանիք, որը շարշի կերթային, ոմանք ոսկերիչ՝ ոմանք ժամագործ, ոմանք դերձակ, ոմանք դեղագործ: Ոչ մեկը զոհ չէին իրենց վիճակին: Առևտրական մեծ սնանկություն մալ կհասներ երկրին վրա, նույն տարին շատերը որ վաճառականության կղբաղերին, աղքատացած էին կամ վնասված»<sup>1</sup>: Ծերենցը հետաքրքիր դիտողություններ է անում ամիրաների հասարակական-բարոյական կերպարի վերաբերյալ: «Քանի մը սնդուկի տեր մարդը առտառոց կարգի մը մեծամտություն ցույց կուտար և մեծ հանճարի տեղ կուզեր անցնել: Տղեւոր գիտուն կուզեր ձեռնալ, իր ոչնչությամբ գիտությունը կարևորել: Ստությամբ և խայտառակությամբ ստակ վաստակելը չէին ամաչել պարծենալու և խաբերայությունը իբրեւ զործանությունը կը հռչակէին»<sup>2</sup>:

XIX դարի առաջին տասնամյակներին թուրքական ռազմա-ֆեոդալական պետությունը տնտեսապես և քաղաքականապես ավելի է թուլանում: Սուլթանական լծի տակ գտնվող մի շարք երկրներում ծայր են առնում ապստամբություններ: Առաջինը ազատագրման դրոշ են բարձրացնում սերբերը և հույները: Այդ շրջանում թուրքական ռեժիմի դեմ ընդվզում են և հայերը: Ճնշելով ազդային-

1 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 16, էջ 17:

2 Նույն տեղում:



աղատագրական շարժումները, Թուրքական պետութ-  
յունը միաժամանակ ելք էր փնտրում տնտեսական  
ճգնաժամից դուրս գալու համար: 1834 թվականի  
հոդալին ռեֆորմը, 1839 թվականի խաթր-շերիֆը  
և մյուս հրովարտակաները չօգնեցին Թուրքիային  
այդ ճգնաժամից դուրս գալու:

Այդ ժամանակաշրջանում է ահա, որ հայու-  
թյան հատվածը կապիտալիստական հարաբերու-  
թյունների զարգացման հետ միասին ապրում է  
ազգության կազմավորման պրոցես, մեծ աղբեցու-  
թյուն դործելով հայկական հասարակական-կուլ-  
տուրական կյանքի վրա: Առաջին հերթին աշխու-  
ժանում են Զմյուռնիայի և Պոլսի կուլտուրական  
օջախները: Նվրոպայում կրթություն ստացած առա-  
ջին հայ երիտասարդները 30—40-ական թվական-  
ներին սկզբնավորում են լուսավորական շարժումը  
Արևմտահայաստանում:

1840 թվականից Պոլսում սկսվում են հրատա-  
րակվել հայերեն թերթեր, որոնց էջերում լուսա-  
բանվում են «ազգի համար» քաղաքական-հասա-  
րակական նշանակություն ունեցող հարցեր:

Ծերենցն այն երիտասարդներից էր, որոնք  
այդ տարիներին առանձին հետաքրքրություն էին  
հանդես բերում հայկական կյանքի հանդեպ: Այդ  
հետաքրքրության արտահայտություններից մեկն  
էր 1843 թվականի՝ նրա Պոլսից Թիֆլիս կատա-  
րած ճանապարհորդությունը: Անցնելով բուն Հա-  
յաստանի միջով, երիտասարդ հայրենասերը մեծ

հուզմունքով և խորին տրամուխյամբ կտրում է սլատմական անցյալի հուշերն արթնացնող վանքերի, ամրոցների ավերակների միջով անցնող ճանապարհները: Նա տեսնում է տնտեսապես հետամնաց, նախապաշարումների դերի մի ժողովուրդ, որ բազմաթիվ բնակավայրերում մոռացել էր նույնիսկ իր մայրենի լեզուն, փոխել դավանանքը, կտրվել ազգային կյանքից ու սովորույթներից: Ականատես է լինում թուրքական գալմազամների, հայ վաշխառուների և ամիրանների հարկերի տակ ճգմված, շատ տեղերում հողազուրկ գյուղացիների, տեղահան եղած գաղթականների թշվառություններին:

Հետագայում, երբ նրան հարցնում են, թե ինչ նպատակ էր հետապնդում այդ ճանապարհորդությունը, նա սլատասխանում է. «Կուլեի իմանալ, թե ի՞նչ կնշանակե Հայաստան»: «Հայաստան կնշանակե խեղճ երկիր» — ահա նրա եզրակացությունը:

1840-ական թվականներին Պոլիսը դարձել էր Փարիզում ուսանած հայ երիտասարդների հավաքատեղին: Սերվիլեն, Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Հիսարյանը և ուրիշներն իրենց շուրջն են համախմբում Մխիթարյան և այլ վարժարաններն ավարտած երիտասարդների, պրոպագանդում եվրոպական քաղաքակրթության յուրացման անհրաժեշտությունը՝ ազգային կյանքի զարգացման համար: 1845 թվականին Պոլսում հիմնվում է «Համազգյաց բնկերությունը»: Առաջին անգամ փորձ է արվում



լուսավորչական և կաթոլիկադավան հայ երիտա-  
տասարդներին համախմբել ազգի ընդհանուր շա-  
հերի շուրջը: Ընկերության գլխավոր խնդիրն էր՝  
սլաշքար ծավալել ազգի տնտեսական-քաղաքական  
դարգացման համար և տարբեր դավանանք ունեցող  
հայերի մեջ արթնացնել ազգային ինքնագիտակ-  
ցության ոգի, տողորել նրանց ազգային շարժման  
դադափարախոսությունը և հայրենասիրության ըզ-  
րացումներով:

Ընկերության գործունեությունը տևում է չորս  
տարի: Ա. Հասունյանը, որ Պոլսի «հայ կաթոլի-  
կական համայնքի» սեփական էր, աշխատում է խա-  
փանել այն: Երիտասարդ հայրենասերները Պապի  
սահանջով վերանայում են ընկերության կանոնա-  
դրությունը: Հետագայում նույն Հասունյանի ջան-  
քերով վատիկանը հատուկ որոշում է ընդունում  
ընկերությունն արգելելու մասին:

«Համազգյաց ընկերությունն» իր գոյության  
կարճ ժամանակամիջոցում ճանապարհ է հարթում  
Պոլսի հայ երիտասարդների հայրենասիրական  
գործունեության համար: Օրթագյուղի Լուսավորչա-  
կան վարժարանի ուսուցիչ Ծերենցը այդ երիտա-  
սարդներից մեկն էր:

## 2

1848 թվականի սկզբներին Ծերենցը գնում է  
Փարիզ բժշկություն ուսանելու: Նա Փարիզ է  
հասնում այն օրերին, երբ խորտակվել էր Լուի-



Ֆիլիպի միապետությունը: Փողոցներում ամբոխը խլրաում էր «կեցցե լույսը, կեցցե բանականությունը» բացականչություններով և հավատացնում, որ Փարիզը դառնալու է «փրկիչ և ազատարար մյուս ժողովուրդների համար»: Նշանակվելով դասատու Մուրադյան վարժարանում, նա միաժամանակ հաճախում է Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Փարիզում այդ տարիներին ուսանում էին մեծ թվով հայ երիտասարդներ: Սորբոնում սովորող հայ ուսանողներից Ս. Ոսկանը մասնակցություն է ունենում Փետրվարյան ապստամբությանը: «Փետրվարյան ապստամբության առաջին որոտումը մեր վրային արևելյան գերության մշուշը փարատեց, — գրում է նա հետագայում, — մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ և գրեթե ակամա ասպարեզ նետեց»<sup>1</sup>:

Արևելյան հետամոնացության ծանր մղձավանջից ելած և եվրոպական լուսավորությամբ համակված այդ երիտասարդները, Թյուլիլեի ամրոցի փլատակների վրա երևակայում էին իրենց ժողովրդի ազատագրման հնարավորությունը արևելյան բռնակալության լծից: Նրանց ծրագրի հիմքում ընկած էին եվրոպական քաղաքակրթությունը, ֆրանսիական բուրժուական գաղափարախոսությամբ տո-

---

<sup>1</sup> «Արևմուտք», 1859, № 20:

գործած լուսավորականութեան գողափարները: Այդ ծրագիրը, իհարկե, երբեք չլուծեց հայ ժողովրդի ազատագրման հարցը, բայց լուսավորիչները ճանապարհ հարթեցին հայ ժողովրդի ազգային-քաղաքական ինքնագիտակցութեան համար:

Ծերենցը Փարիզ զնաց որպէս իր ժողովրդի քաղաքական վիճակին հասու քաղաքացի: Փետրւարյան ապստամբութեանն ուժեղ ազդեցութեան գործեց նրա վրա: Մեծ հաւատով նա բնդունեց ֆեոդալիզմի դեմ ծառայած բուրժուազիայի և նրա գաղափարակիցների՝ ժողովրդին տված խոստումները: Եվ այդ տավալորութեան տակ էր դեռ, երբ յոեղի ունեցան Հունիսյան դեպքերը: Ծերենցը մնաց բուրժուական պատրանքների սահմաններում, բացասաբար ընդունեց ժողովրդական ելույթները, հավատացած, որ եթե չլինէին Հունիսյան դեպքերը, ապա ֆրանսիական բուրժուազիան կկատարեր իր տված խոստումները ժողովրդին և չէր լինի հետագա ոեակցիան:

«Պատմութեանը... օր մը պիտի պատմե, — գրում է Ծերենցը հետագայում, — պզտի Նապոլեոնի, թե ղեկտեմբերի երկուքեն վերջը բոլոր դաշնակիցները, ամեն կարգի եկեղեցականք, պարզեցին իրենց զրոշները, դաստիարակութեան տերը իրենք եղան և բարոյական և կրօնք վերացան երկրեն և մեկ օր մը եղավ, որ միայն կրօնամոլները, անկրօնները մնացին, ժամանակ մը եղավ, որ Թիերները, Հյուգոները Քիներ, Լամարտիններ տարա-



սահման կադատեին, Միշկենները իրեն բեմեն կը-  
վռնդվեին և եղվիտները ծափ կզարնեին»<sup>1</sup>:

Դառնությամբ նշելով Նապոլեոնի դաշնը Վա-  
տիկանի հետ, նա նկարագրում է, թե ինչպես ժո-  
ղովուրդը «քսան տարի որդնոտելով, փտեցավ պըղ-  
տի Նապոլեոնի արյունաշաղախ, լսրծուն ոտքե-  
րուն տակ»<sup>2</sup> և հասավ նրան, որ ստիպված եղավ  
նորից բարձրացնել ապստամբության դրոշը: Մե-  
ղադրելով Նապոլեոնին, Ծերենցը չի տեսնում նրա  
հոռում կանգնած երեկվա փետրվարյան ապստամ-  
բության կազմակերպիչներից բուրժուազիային, որը  
Հունիսյան դեպքերից վախեցած շտապ դաշինք  
կնքեց ոչ միայն միապետության, այլև Վատիկանի  
հետ, որոնց դեմ դուրս էր եկել ապստամբության  
առաջին օրերին:

Հետևելով Օ. Ռենանի ուսմունքին, Ծերենցը  
հաստատում է նրա այն կարծիքը, ըստ որի, եթե  
չլինեիր Վատիկանի գերիշխանությունը Նվրոպա-  
յում, ապա ֆրանսիական ժողովուրդը չէր տառապի  
Նապոլեոնի կրնկի տակ և Փարիզյան կոմունայի  
ժամանակ դուրս չէր գա իր շահերը արյան գնով  
պաշտպանելու:

«Եվ հիրավի այս խոսքերուն ճշմարտության  
օրինակ մը մեզի եղավ Ֆրանսիայի քսան տարվա  
և այսօրվա ներկա վիճակը, որուն թշվառությանց

1 Հ. Շիշմանյան, Հրատարակչությանց հավաքմունք, էջ 53:

2 Նույն տեղում, էջ 51:





առաջին պատճառ կաթոլիկությունը կրնա համար-  
վիլ: Վասնզի Լուի-Քոնսպարտի առաջին դաշնա-  
կիցը Հռոմա գահը և եկեղեցին եղաւ»<sup>1</sup>:

Մինչև վերջ մնալով կաթոլիկական կրօնի և  
Վատիկանի թշնամի, Մերենցը միաժամանակ չհաս-  
կացաւ, որ Վատիկանը հանձին Հռոմի Պապի, իրա-  
կանացնում էր նաև բուրժուազիայի մարտական  
ծրագիրը՝ ժողովրդական շարժումները ճնշելու և  
փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական  
զազափարների դեմ պայքարելու գործում:

Մերենցը համակրանքով է վերաբերվել ժողո-  
վրդական շարժումներին՝ ֆեոդալական բռնության  
դեմ, սակայն չի ըմբռնել բուրժուական հասարա-  
կության դասակարգային էությունը: Նա մերժել է  
սոցիալական այն ուսմունքները, որոնք բացասում  
էին մասնավոր սեփականությունը և առաջադրում  
բուրժուական կարգերի կործանում: Նրա կարծիքով  
սխալվում են «բոլոր անոնք որ Լիկուրգոսեն սկսած  
մինչև Սեն-Սիմոն, Ֆուրիե և Քապի, Ադամա որդ-  
վոց համար հավասարության վարդապետություն-  
ները քարոզելով աշխարհքս տակն ու վրա կընեն և  
արյուններու կներկեն»<sup>2</sup>: Չըմբռնելով սոցիալական  
հակասությունների հիմքի վրա առաջացած դասա-

---

1 2. Նիշմանյան, Հրատարակչությանց հավաքմունք,  
կջ 36:

2 «Արևելյան մտմուլ», 1873, № 7, էջ 947:

կարգացին անհավասարութեան փաստը, Մերենցը գտնում է, որ անհավասարութիւնը գոյութիւն ունի առհասարակ տարրեր դաստիարակութիւն և տարրեր կրթութիւն ունեցող մարդկանց միջև: Իսկ դա հնարավոր է վերացնել միայն մարդու բարոյական վերափոխման ճանապարհով: «Չէ, մարդս հավասար ըլլալու համար չէ ստեղծւած և ոչ երբեք պիտի կարենա ըլլալ, — գրում է նա նույն տեղում, — Աշխարհքը ստեղծող աջը դաստիարակութիւն մը դրած է ամեն բանի մէջ և դեռ հազարավոր տարիներ պետք են, որ ժողովրդոց դաստիարակութիւնը հասնի հոն, որ կարենա ճանշնալ և որոշել հանճարը և առաքինութիւնը և հանձնել ինքզինքը անոր»:

Քրիստոնեական բարոյախոսական դոգմաների ազդեցութեամբ Մերենցը հանցանք էր համարում խախտել «վերուստ սահմանված» նորմաները և փոխել տվյալ հասարակարգի հիմքերը, վերացնել դասակարգէթը այն դեպքում, երբ նրա կարծիքով, նախախնամութեան կողմից արդեն սահմանված են մարդկային թշվառութիւնները վերացնելու միջոցները: Ուստի և միանգամայն բնորոշ է, որ նա մի կողմից նկատում է մարդկային ահաւոր թշվառութիւնները, հանուն հումանիզմի պայքարում մարդու ազատութեան և նրա նյութական պայմանների բարելավման համար, մյուս կողմից դատաւիտում այն ուսմունքը, որը քննադատում է սոցիալական անհավասարութիւնը և առաջարկում մարդկային կյանքի երջանկութեանը հասնելու նոր ուղիներ:



Ծերենցը առաջ է քաշում մարդկանց դաստիարակելու իր բարոյախոսությունը: Պատահական չէ, որ Փարիզում հղած ժամանակ, անդրադառնալով տեղի ունեցող իրադարձություններին, նա գրել է. «Տարիեն ավելի է աշխարհքիս կեդրոնը կեցած Փարիզ, իբր թե հայելիի մը մեջ կտեսնենք բոլոր աշխարհքը և կհարցնենք մեկ-մեկու, թե արդյո՞ք կատարյալ դաստիարակություն ըլլար սա լուսավորյալ կարծւած ժողովրդոց մեջ, կըլլայի՞ն սա խառնակությունները, սա հղբայրասպան կոտորածները, որոնց մենք ականատեսս եղանք: Ուրեմն երկրի մը փառավոր քաղաքները, զարմանալի մշակությունը, անբավ վաճառականությունը երջանիկ չեն ըրեր իր բնակիչը՝ թե որ արժանավոր դաստիարակություն մը կսպակսի»<sup>1</sup>:

«Արժանավոր. դաստիարակություն» տալու փափագով ահա, Փարիզում, Ծերենցի նախաձեռնությամբ, կազմակերպւում է «Արարատյան ընկերությունը», որի նպատակն էր համախմբել ոչ միայն կաթոլիկ, բողոքական և լուսավորչական հայերին, այլև առհասարակ արևմտահայ և արեւելահայ ժողովուրդը: Ընկերության անդամներին առաջարկւում է ամենուր հիմնել դպրոցներ, հրատարակչական մարմիններ, մշակել կրթության, դաստիարակության և հայրենի կուլտուրայի, գիտությունների զարգացման պլան, առաջ մղելու

<sup>1</sup> «Արշալույս Արարատյան», 1850, № 366, էջ 2.



համար ազգության զարգացումը: «Ազգի մը քնտիր մասին սիրտը միայն կզգա ազգ բառին նշանակությունը, — գրում է նա հայտարարության մեջ, — անոր միտքը միայն կրնա ունենալ ազնվական և վսեմ գաղափարներ և ինքը միայն հանձն կառնե հայրենյաց համար հոգարություն մը զրկանքներ կըրել»:

### 3

1853 թվականի փետրվարին Մերենցը վերադառնում է Պոլիս: Ճանապարհին անցնում է Միլան քաղաքով: Այստեղ նրան ոստիկանությունը թյուրիմացաբար ձերբակալում է իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Մաձինինին գեմքով նման լինելու համար:

Պոլիս գալով Մերենցը բախվում է կաթոլիկական համայնքի պետ Անտոն Հասունյանի հետ: 1852 թվականին իտալերեն լեզվով հրատարակած անստորագիր գրքույկում Հասունյանը շարադրում էր վատիկանի սկզբունքները, հռոմեական եկեղեցու դոգմաները հայերի մեջ տարածելու վերաբերյալ: Նա հարձակվում է լուսավորական շարժման ղեկավարների վրա, նրանց հայացքները համարում հակապետական, քննադատում է և մխիթարյաններին, նրանց պրոսպագանդան համարելով թույլ, մեղադրում Մուրադյան վարժարանի սաներին, որոնք նրա կարծիքով, ավելի նվիրված էին «ազգին», քան վատիկանին:

Ծերենցը մերկացնում է Հասունյանի հրատարակած գրքույկի քաղաքական միտումները, ցույց տալիս Պապի անսահմանափակ իշխանությունը Արևելքում ամրապնդելու նրա միտումը:

Այդ պայքարին արձագանքում են Ս. Ոսկանը, Մ. Պեշիկթաշլյանը, հետագա տարիներին՝ Սվաճյանը, իսկ ավելի ուշ՝ Պարոնյանը, Բաֆֆին, Արծրունին: Ամբողջ տասնամյակներ տևող այդ պայքարը ստանում է քաղաքական բովանդակություն և համազգային բնույթ: Ծերենցի մղած այդ պայքարի կարևորությունը նշել է Հ. Սվաճյանը 1875 թվականին «Մեղուի» № 62—65-ում տպագրած «Քրիստոսի եկեղեցու բաժանումը և պապականությունը» տոքթոր Հ. Շիշմանյան և Տեր Խորեն հախսկոպոս» վերնագիրը կրող հոդվածում: Նա ցույց է տալիս, որ այն օգնել է նաև լուսավորչական եկեղեցու և նրա սպասավորների (հանձին Խորեն Նար պեյի) ռեակցիոն գործունեության մերկացմանը:

Որպես հակահասունյան շարժման պարագլուխ, Ծերենցը պայքարում էր նաև միսիոնարական կրոնա-լուսավորական պրոպագանդայի դեմ, ցույց տալիս նրա վնասաբեր հետևանքները ազգի իսկական լուսավորության գործում:

Հետագայում գրված իր հոդվածներում, մերժելով Վատիկանի և Հասունյանի միջամտությունը հայ կյանքին, Ծերենցը միաժամանակ անդրադառնում է հայ լուսավորչական եկեղեցու հարցին: Նա



քննադատում է հայ ավանդական եկեղեցու հետամնացությունը, դատապարտում հայ կաթողիկոսական և լուսավորչական եկեղեցիների սխալաստիկ վեճերը կրոնական դոգմաների շուրջը: Բայց միաժամանակ հրաժարվում է կաթողիկոսությունից ու դառնում լուսավորչական, այն համոզումով, որ հայ ավանդական եկեղեցին իր հիմքում պահում է քրիստոնեական հնագույն բարոյախոսությունը, որ պիտի օգնի մարդկանց քաղաքական լուսավորության և նյութական կյանքի բարօրությանը: Այդ լուսավորությունը, նրա կարծիքով, պետք է պարուրված լինի «քրիստոնեական մարդասիրության ոգով» և հիմք դառնա մարդու բարեյական վերադաստիարակությանը:

Այստեղից էլ առաջանում են Ծերենցի իդեալիստական ըմբռնումները կեցության և գիտակցության փոխհարաբերության մասին:

Հայ ժողովրդի պատմական զարգացման պրոցեսը քննելիս նա առաջ է քաշում այն թեզը, որ հասարակական երևույթների զարգացման հիմքում ընկած է առաջին հերթին գաղափարը: «Նյութական երևույթը երկրորդականն է իրին մեջ ներքողյալ գաղափարն է ամենայն» — գրում է նա Գարազաշյանի «Հայոց քննական պատմություն» գործի առթիվ<sup>1</sup>: Անցնելով հայ ժողովրդի պատմական կյանքի քրո-

1 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 12, էջ 5:

նությանը, Ծերենցը հանգում է այն եզրակացության, որ «բոլոր ազգաց մեծին և պլտիկին նյութական և բարոյական թշվառության կորստյան միմիայն պատճառը տգիտությունն է»։ Նրա լուսավորական ծրագրի հիմքում ընկած է սոցիալական հակասությունները սքողող, բարոյախոսության շղարշով պատած «ազգային դաստիարակությունը»։ Այդ դաստիարակության կիրառման մեջ տեսնում է աղբի և նրա անդամների նյութական և բարոյական ուժերի աճման երաշխիքը։ «Ով որ ազգային դաստիարակության համար կաշխատի՝ փրկության համար կաշխատի, ով որ ուսմանց ծավալման, կաշխատի՝ աղքատութեն և գերութեն աղատելու համար կաշխատի, ով որ գիտությանց ընդհանրության կաշխատի, ժողովրդյան բարոյականին համար կաշխատի և անոնք կրնան ըլլալ երկրի մը երջանկության, հարստության և անդորրության աղբյուրները»<sup>1</sup>։

Բարոյախոսությունը մնում է Ծերենցի մշակած ազգային դաստիարակության հիմքում։ Դաստիարակությունը նրա կարծիքով կարող է վերացնել դասակարգային հակասությունները, դրանով և ազգի թշվառությունն ու շահագործումը։

---

1 2. Շիշմանյան, Հրատարակչության հավաքմունք, էջ 57։



Ղրիմի պատերազմից հետո թուրքական պետության հրապարակած «Թանգիմասթը» նորից աշխուժացնում է հայ հասարակական տարբեր խավերի քաղաքական տրամադրությունները: Այդ բանին մեծապես նպաստում են նաև Բալկաններում սկսված ազգային ազատագրական շարժումները: Թուրքական պետությունը, մի շարք զիջումներով, աշխատում է ամրապնդել իր դիրքերը: Հայերի ու շաղրությունը Բալկաններից թեքելու համար, նրանց հնարավորություն է տրվում մշակելու ազգային սահմանադրություն:

Այդ սահմանադրությունը, ըստ էության, պետք է լիներ կանոնադրության նման մի բան, որի համապատասխան պետք է կազմակերպվեր Օսմանյան Թուրքիայի սահմաններում ապրող հայ ժողովրդի ներազգային կյանքը: Սահմանադրությամբ պետք է որոշվեր ազգային դործերը տնօրինելու հայերի իրավունքները, ինչպես նաև հասարակական-քաղաքական գործունեության այն շրջանակները, որոնց մեջ կարող էին գործել թուրքահայ գաղութների սոցիալական տարբեր խմբավորումները:

Ազգի քաղաքական-տնտեսական կյանքը կազմակերպելու համար շահագրգռված արևմտահայ լուսավորիչները մեծ խանդավառությամբ և հավատով ձեռնարկեցին սահմանադրության մշակմանը: Հիշելով այդ շրջանը Գր. Օտյանը գրում է. «Երբ այն-

քան տարիներն հաքը մտքովս կհաճիմ այն ժամանակներուն մեջ, ուր լավ պատերազմը պատերազմեցանք լուսո խավարի դեմ, ժողովրդականության ամիրայության դեմ և սահմանադրության եկեղեցական ու աշխարհական իշխանությանց դեմ, երբ աչքիս առջև կբերեմ այնքան խռչնդոտները, այնքան սպառնալիքները, այնքան ահ ու դողը, այնքան վտանգը, որոնց մեջեն անցանք, երբ կհիշեմ վնասներն ալ զոր բրինք և անոնց ներգործությունը զոր կրեցինք առ յապայն զարմանք կպատե զիս ու կըսեմ «ի՛նչ վեհ է երիտասարդությունը»<sup>1</sup>։ Սահմանադրության մշակողները համոզված էին, որ հայությունը ձեռք կբերի լայն իրավունքներ, կստեղծվեն նրա կյանքի բարեկաման և զարգացման համապատասխան պայմաններ։

1857-ին կազմված սահմանադրությունը ներկայացվում է պետությանը։ Բ դուռը մերժում է այն։ Սկսվում են փոփոխություններ և վիճաբանություններ՝ հանվող կամ հավելվող կետերի շուրջը։

Սահմանադրությունը պետությունը հաստատում է 1860 թվականի մայիսին։ Սակայն հենց առաջին իսկ օրերից հայ հասարակայնության մեջ ծայր են առնում նոր խմորումներ և հակասություններ։ Ժողովրդը ղեկավարող լիբերալ բուրժուական գործիչները՝ վախեցած Պոլսի էսնաֆների և դավառի բողոքներից, անմիջապես կողմնորոշվում են

---

<sup>1</sup> Գ. Օտյանի «Գոհարները», 1931, հ. Բ., էջ 34—35։



սեակցիայի կողմը, զիջումներ անում կառավարութ-  
յանը, ամրապնդում իրենց դիրքերը: Ծերենցը  
գործնական մասնակցություն չունեի սահմանա-  
դրության մշակմանը, սակայն մոտիկից հետևում  
էր այդ աշխատանքներին, մյուս գործիչների նման  
մեծ հույսեր կապում նրա հետ: Ծերենցը սլաշտ-  
պանել է սահմանադրությունը, համարելով այն  
«ազգի նեցուկը և փրկությունը», միաժամանակ և  
մեծ վշտով նկարագրել Ազգային ժողովում նստած  
«ազգի ջոջերի» քմահաճ վեճերը: Նրա կարծիքով,  
Ազգային ժողովը փոխանակ հանդիսանալու «ազգի  
դրություն աղբյուրը», զբաղվում է միայն «քան-  
դելով» և ոչինչ «չձեռնարկելով»: Խորիմյանի հրա-  
ժարականից հետո, 1873 թվականին իր գեկույց-  
ներից մեկում նա հայտարարում է, որ «Ազգը թե-  
ոևս ներքին կառավարություն մը ունեի, բայց այդ  
կառավարությունը բավական ժողովրդական չէր,  
որ իր ազգին սիրելի ըլլար և բարոյական ազդեցու-  
թյուն մը ունենար»<sup>1</sup>:

Չնայած իր չափավոր բնույթին, 60-ական  
թվականների առաջին կեսերին սահմանադրությու-  
նը նպաստում է ազգային շարժման ընդլայնմանը:  
Օգտվելով սահմանադրությունից հայ մտավորա-  
կանները մտածում էին տարածել հիվորդական քա-  
ղաքակրթության և գիտության նվաճումները և:

<sup>1</sup> Հ. Շիշմանյան, Ազգային լսարան... Եվրոպական քա-  
ղաքականության ներկա ժամանակներուս հայ ազգի վրա  
ըրած ազդեցությունը, 1873, էջ 19:

ապահովել երկրի տնտեսական-քաղաքական զարգացումը:

Սահմանադրության գործադրման հենց առաջին ամիսներին կազմակերպվում է «Բարեգործական ընկերությունը»: Ծերենցը դառնում է այդ ընկերության հիմնադիրներից մեկը: Նա մասնակցում է կանոնադրության մշակմանը և Աղաթոնի հետ գրում հայտնի հայտարարությունը: Հայտարարության հեղինակները կարևոր նշանակություն են տալիս տնտեսական առաջադիմությանը, որն ուղղված էր հին կարգերի դեմ: «Շատերը ազգին մեջ,— գրում են նրանք,— սկսած էին զգալ, որ երկրին այն ընդհանուր հեղափոխության մեջ, հեղափոխություն՝ որն տալին ու վրա կընե հին կարգերն ու կանոնները և անոնց վրա հիմնյալ ընկերական շենքը, հայ ազգին առջև նոր ահագին խնդիր մը կելնե կենաց ու մահու խնդիր մը»<sup>1</sup>:

Ո՞րն էր այդ խնդիրը: Ծերենցի կարծիքով դա հետամնացությունը, արտադրական հին ձևերը վերացնելու և նոր քաղաքականություն մտցնելու խնդիրն էր, բայց ոչ միայն այդ: Նա տեսնում էր, որ նոր ժամանակների տնտեսական զարգացումը բերում է իր հետ նաև աղետներ, քայքայում է և՛ քաղաքը, և՛ գյուղը, ավելացնում չքավորների և ունեզուրկների թիվը: Ի՞նչպես պետք է պահպանել երկիրը օրհասական քայքայման վտանգից: Հարց, որ

---

<sup>1</sup> «Կոունկ Հայոց աշխարհի», 1862, էջ 616:



կանգնում է ահա հայտարարության հեղինակների առջև:

«Ի բնե արհեստավոր ու երկրագործ ազգ մը իր ձեռքի արվեստն ու երկրագործությունը անգիտանալու համար թշվառության մատնված՝ ուրիշ կերպով չկրնար կանգնիլ, բայց միայն նոր քաղաքականության պահանջած արվեստներն ու երկրագործությունը ձեռք բերելով: Այն ատեն ահա կըրնան հավասար զորութեամբ մրցիլ մեր հողին վրա օտարոտի ճարտարութեանց, արվեստներու և երկրագործութեան հետ և մեր բնիկ երկրացի ըլլալուն շնորհիւն ի բաց վանիլ զանոնք, որով և մեր ճակտին քրտինքովը մեր հացը գտնել ու ուտել այն հողին վրա, ուր այս աստվածային վճիռը տրվեցաւ առաջին մարդուն»<sup>1</sup>: ...«Երբ կտեսնենք, որ հազարավոր արհեստավորներ ձեռլընին ծոցերնին դրած, աչլընին ապարդյուն գործիքներուն վրա ձգած ու օրակայն հացերնին ճարելեն հուսահատած, անշարժ ու տխուր նստած կմտածեն, երբ որ հարցուր ընտանիքներ հարստութեան ու շքեղ պալատներու մեջ կքնանան ու դառն չքավորութեան ճանկերուն կարթնանան, երբ կտեսնենք, որ խումբ-խումբ որբ ու անտեր մանկտին փողոցներն ու շուկաները կթափառին, մոլութեանց օգը միայն ծծելով կապրին, ազգերնուս անհավատութեան ու բեռ պետութեան վնասառիթ հպատակներ կըլլան, երբ կտես-

<sup>1</sup> «Կոռնկ Հայոց աշխարհի», 1862, էջ 614—615:

նենք Ասիայի բաղմաբեղուն դաշտաց շատերը և անոնց մեջ Հայաստանի պատվական լքյալ ու խոպան, երբ կտեսնենք, որ արիասիրտ զավկները օտար աշխարհներ պանդխտած սով ու քաղց հանձն առած, իրենց սիրեցյալ ոգեպահիկը ճարելու համար հազար տեսակ տառապանաց ենթակա եղած ու տարիներով իրենց սիրուն ընտանյաց գգվանքին զրկված...Ու ո՞ր ինքնամոլ հայն է այն, որուն սիրտը ի գութ չշարժի ու անտարբեր աչօք կարենա նայիլ իր արենաւցացը այս աղեկտուր վիճակի վրա»<sup>1</sup>:

1863 թվականին գրած «Բարեգործական ընկերություն» վերնագրով հոդվածում, նորից անդրադառնալով այն հարցին, որ հայ ազգը ներկա տնտեսական-քաղաքական կյանքի պայմաններում կանգնած է քայքայման լուրջ վտանգի առջև, Ծեղենցը արտահայտում է այն միտքը, թե ազգի տիրապետող տարրը պետք է մտածի «այս խեղճության դեմ թումբ մը կաղմել և արգելուլ, որ տգիտության և աղքատության ճարակը չի ծավալի»: Նա ակնարկում է հայ բուրժուազիային, նրա հետ կապելով, ի վերջո, ժողովրդին տնտեսական քայքայումից փրկելու հույսը:

Ազգի տնտեսական բարգավաճման հիմքում դնելով երկրագործության զարգացման անհրաժեշտությունը, ընկերության անդամներից Սվաճյանը, Թագվորյանը, Քյաթիսյանը նալբանդյանի

<sup>1</sup> «Կռունկ Հայոց աշխարհի», 1862, էջ 614:



առաջադրած «տնտեսական հարցի» սկզբունքներից  
ելնելով, հանդում էին ավելի արմատական եզրա-  
կացությունների, քան թելադրում էր Ընկերության  
ընդհանուր ծրագիրը: Այդ էր պատճառը, որ Նալ-  
բանդյանը անդամագրվեց այդ Ընկերությանը,  
ելույթ ունեցավ նրա նիստերից մեկում և շարունա-  
կեց կապ պահպանել նրա անդամների հետ:

Ազգային սահմանադրությամբ հիմնված հաս-  
տատությունների մեջ «Բարեգործական ընկերու-  
թյունն» առաջին կազմակերպությունն էր, որտեղ  
արծարծվում էին ազգային շարժման հարցերը:

«Բարեգործական ընկերությունը» միաժամա-  
նակ արձագանքում է ազգային աղատագրական  
շարժմանը: Այդ շրջանում Արևմտյան Հայաստա-  
նում նախապատրաստվում էր Զեյթունի ապստամ-  
բությունը: «Բարեգործական ընկերությունը» և նրա  
հետ առնչվող հասարակական առաջավոր գործիչ-  
ները այդ ժամանակ առաջ են քաշում Կիլիկիայի  
հարցը:

Իր հիշողություններում Ա. Արփիարյանը գրել  
է. «Կիլիկիո զարգացումն այն ատենները երիտա-  
սարդներու հոգածության միակ առարկան էր:  
Մնունդ առնելով Իսկուտարի մեջ բարեգործական  
ընկերությունն, իրեն նպատակ էր դրել երկրագոր-  
ծության զարգացումն Կիլիկիայի մեջ և եթե հոռ-  
մեական կղերն յուր կրոնական շահերը վտանգված  
տեսնելով չզինվեր այդ ընկերության դեմ և զրպար-  
տություններով խեղդամահ չսպաներ, անշուշտ

Կիլիկիայի հայերն սովամահ տանջվելու տառապանքից զերծ պիտի մնային»։ Նա հիշատակում է, որ դեռևս 50-ական թվականներին Կիլիկիայի հարցով առանձնապես հետաքրքրվում էին Օտյանը, Ռուսինյանը, Շիշմանյանը։

Գաղտնիք չէր, որ սահմանադրության կազմակերպիչները, նրանց հետ և հրապարակի վրա գործող լուսավորիչները փայփայում էին Կիլիկիայում և Անատոլիայի տերիտորիայի վրա առևտրական արդյունաբերական կենտրոններ ստեղծելու երազանքը։ Ընկերության անդամներն առանձին ուշադրություն են դարձնում այդ հարցի վրա, գործնական աշխատանք ծրագրում Կիլիկիայի հայության քաղաքական-տնտեսական կյանքի կազմակերպմանն օգնելու նպատակով։ Ծրագրում տաված էր, որ Կիլիկիայում անհրաժեշտ է բացել երկրագործական դպրոցներ, լուսավորել ժողովուրդը և այլն։

Նախաճառներ նույնպես կողմնակից էր ընկերության ծրագրին, և ինքը ևս պրոպագանդում էր Կիլիկիայում հողամասեր մշակելու, կադրեր դաստիարակելու գաղափարը։ Վերադառնալով արտասահմանից, նա անմիջապես նախաձեռնում է Հայաստանի քարտեզ կազմելու գործին և իր հայտարարության մեջ՝ «Հյուսիսափայլում» նշում, որ այդ քարտեզից ստացված եկամուտը հատկացվելու է Պոլսի Բարեգործական ընկերությանը, հայոց աղքատ մանուկներին կրթելու և դաստիարակելու հատկապես երկրագործության և արվեստների մեջ։



«Մասնավոր դպրոցը շուտով կբացվի Փոքր Հայաստանի մեջ, — գրում է նա, — ուր հողի արգավանդությունը և ծովեզրյա դուրքունը մեծապես գրավում են մեր բոլորի ուշադրությունը, որ մի հատ է յուր տեսակի մեջ և որի վերա անշափելի մեծ հնազդդի մտածողների հույսերը»<sup>1</sup>:

Ծերենցը Ընկերության հանձնարարությամբ տեղի պայմաններն ուսումնասիրելու նպատակով մեկնում է Կիլիկիա: Այնտեղ սկսված զեյթունցիների ապստամբության պատճառով նա վերադառնում է Կիլիկիայից՝ կառավարության պահանջով: Ապստամբությունը պարտվում է: Ապստամբությանը մասնակցելու գործում «Բարեգործական ընկերությունը» առնվում է կասկածի տակ և ենթարկվում լուծարքի: Ծերենցը հետազայում հաստատում է, որ Հասունյանը պետությանը մատնեց «Բարեգործական ընկերությունը» որպես Զեյթունի ապստամբությանը նպաստող կազմակերպություն: Ծերենցը Հասունյանին մեղադրում է նաև ուղղակի «Զեյթունի հերոս մարտիկներին մատնելու» մեջ:

Մասնակցել է Ծերենցը Նալբանդյանի կազմակերպած գաղտնի խմբակին՝ կամ առհասարակ տեղյակ եղել է նա Սվաճյանի, Թադևորյանի և հեղափոխական մյուս գործիչների գաղտնի գործունեությանը՝ մեղ հայտնի չէ: Հայտնի է միայն, որ անձամբ ծանոթ է եղել Նալբանդյանին և իր հոգում միշտ վառ է պահել մեծ հայրենասերի կերպարը:

<sup>1</sup> «Հյուսիսփայլ», 1862, մայիս, էջ 235:

«Բարեգործական ընկերության» լուծարքից հետո Ծերենցը 10—12 տարի պետական ոստիկանության մեջ վարում է բժշկի պաշտոն: Այնուհետև նա ազատվում է աշխատանքից՝ կասկածի տակ առնվելով պետության կողմից: Հետագայում Գ. Օտյանի միջնորդությամբ նրան հաջողվում է տեղավորվել Պոլսի հիվանդանոցներից մեկում, ուր աշխատում է մինչև 1875 թվականը:

Տարիներ անց հիվանդ, անկողնին դամված ծերունին անարդար է համարել իր դեմ կազմակերպված հալածանքները, բողոքել է այն բանի համար, որ ինքը չնայած բարեխղճորեն կատարել է իր պարտականությունները, սակայն իր պաշտոնատեղում միշտ վարձատրվել է քիչ: «Տերության ծառայությանց մեջ հաջող էի... դժվարին խնդիրներ կհանձնեին... բայց դրամական վարձատրությանց երբ կհասներ խնդիրը, ես միշտ և հազիվ ապրելու ոռճիկովս կմնայի: Մինչդեռ ինձմե տգետներ և անպիտաններ կտեսներ, որ կքաջելին դեպ առաջ»<sup>1</sup>:

60-ական թվականների երկրորդ կեսից հետըզհետև ուժեղացող սեռիկիան խափանում է կրթական-լուսավորական ընկերությունների գործունեությունը, ուժեղանում են հալածանքները ազգային ազատագրական շարժման և նրա գործիչների

<sup>1</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 22, էջ 25:



դեմ: Քաղաքական խնտագույն պայմաններում հրատարակվող «Մեղուն» մի քանի անգամ արգելվում է և վերջնականապես փակվում 1874 թվականին: Նույն թվականին մեռնում է Սվաճյանը, և նրա մասին թերթերն արտահայտվում են շատ զուսպ:

1872 թվականին Մերենցը թողնում է իր Հ. Շիշմանյան ազգանունը և Մերենց ծածկանունով սկսում թղթակցել Մամուլյանի «Արևելյան մամուլին»: Մամուլյանը ողջունում է նոր թղթակցին, գովում նրա գրիչը և «հոգու թոխքը»: Մերենցը «Շատ նիզակների կոտրած է գրական մենամարտերուն մեջ»,— գրում է թերթի խմբագիրն իր թղթակցի մասին,— այնուհետև և այժմ ազգային մեծ նպատակի մը նվիրած է իր բոլոր ճգունքը»<sup>1</sup>: «Արևելյան մամուլն» այդ ժամանակ Զմյուռնիայում զգուշությամբ շարունակում էր 60-ական թվականների ազգային լուսավորական շարժման պրոսպերանդան:

Մամուլյանի ամսագրում տպագրած առաջին հոդվածներում Մերենցը շոշափում է ազգային կյանքի վերաբերյալ մի շարք հարցեր: Նա շարունակում է պայքարը Հասունյանների դեմ, պաշտպանում Խրիմյան Հայրիկի դատը, քննադատում ազգային-քաղաքական և պատրիարքական ժողովներում քննարկվող հարցերը, ծաղրում եռհմանագրության անունով գործող «Ազգային ջոջերին»: Նա

<sup>1</sup> «Արևելյան մամուլ», 1873, № 6, էջ 303:



գրում է. «Ասում ենք սահմանադրությունը վերս-  
քննելի է, բայց միայն խոսում ենք: Քաղաքական  
ժողով կա, բայց հրաժարված, կրոնական ժողով կա  
զբաղված ոչնչով, լրագրություն կա, բայց փնտրում  
է միայն վատը... Թատրոններ կան, որ ժողովուրդը  
միայն դորժողություն տեսնելու կհաճախե և մտա-  
վորական լույս փնտրելու փափագ չատ քիչ կցու-  
ցրեն»<sup>1</sup>: Ծերենցը քննադատում է գեղարվեստական  
գրականության վնասակար տենդենցները. «Մի  
քանի թարգմանությունք կան,—գրում է նա նույն  
տեղում,—ազգային սակավաթիվ հեղինակություն,  
բարոյականի հարված, տգիտություն, անձնա-  
սպանություն իմաստից, ոչնչություն և բառերու  
շառաշմունք ժողովրդյան զլուխը կլեցնեն»:

«Ծիածան» և «Մանգումիս էֆքյար» թերթերում  
Ծերենցը տպագրում է մի հոդված «Ապակենտրո-  
նացում» վերնագրով, որտեղ խոսելով ազգային ժո-  
ղովի մասին, փորձում է նրա դերը նմանեցնել  
անգլիական կամ ամերիկյան պառլամենտի խա-  
ղացած դերին: Բայց նա գտնում է, որ այդ Ազգա-  
յին ժողովը չի արդարացնում իրեն, գործում է  
ապակենտրոնացված, կտրված ժողովրդից և հա-  
կադրվում «ազգին»: Այս հոդվածը արատապում է  
«Մեղուն» իր 1871 թվականի № 55-ում, որպես Ազ-  
գային ժողովի դեմ արտահայտած իր սեփական  
կարծիքը: «Մեղուն» կիսում էր Ծերենցի կարծիք-

<sup>1</sup> «Արևելյան մամուլ», 1873, № 5, էջ 379:



ները՝ կենտրոնացված ուժեղ «Օրենսդիր հաստատություն» ունենալու հարցի վերաբերյալ:

1873 թվականին Օրթագյուղի Ազգային լսարանում Ծերենցը հանդես է գալիս գրականության, լուսավորության և այլ հարցերին նվիրված զեկուցումով, որը և նույն թվականին տպագրվում է «Եվրոպական քաղաքականության ներկա ժամանակներու հայ ազգին վրա բրած ազդեցությունը» վերնագրով: Այդ գրքույկի դեմ դուրս են գալիս նրա կաթոլիկ հակառակորդները՝ «Յնորք և երեակայությունք դոքտոր Շիշմանյանի» մի բրոշյուրով; փորձելով ջախջախել հեղինակի թեզերը լուսավորական շարժման մասին: «Ազգասեր հայ» կեղծանունով քննադատը մեղադրում է նրան վոլթերականության մեջ: «Ձեզի համար,—գրում է նա,—բարին միայն վոլթերի սկզբունքներն են»<sup>1</sup>:

1875 թվականին Ծերենցը անսպասելի թողնում է Պոլսը և աղջկա հետ մեկնում Կիպրոս: Ե. Օտյանը և մյուս կենսագիրները գրում են, որ նա մինչև Կիպրոս դնալը կարճ ժամանակով պաշտոնավարել է Օրթագյուղի հռոմեական հայոց վարժարանում՝ տեսչի պաշտոնով: Այնտեղից նա հանվել և ուղարկվել է Կիպրոս: Սակայն իր կյանքի վերջին տարիներին դրած հուշերի մեջ ինքը՝ հեղինակը մեղ տալիս է հետևյալ տեղեկությունները:

<sup>1</sup> «Յնորք և երեակայությունք տոքսնոր Շիշմանյանի», 1873, էջ 13:

1872 թվականին նա Գ. Օսյանի միջնորդութեամբ տեղափոխվում է Պոլսի հիվանդանոցներից մեկում՝ բժշկի պաշտոնով: 1874-ին մեռնում է կիսը, մնում է 14-ամյա աղջիկը՝ Թագուկը: Թագուկի թղթերի մեջ մնացել է նրա մի անավարտ վեպը, որտեղ պատանի աղջիկը նկարագրել է իրենց անուրախ օրերը մոր մահից հետո: Ծերենցի հոգեկան ծանր կացութեանը հետևում է մի նոր հարված: 1875 թվականի դարնանը նրան հեռացնում են պաշտոնից: 1885 թվականի նոթեբրում. Ծերենցը նկարագրում է այդ օրերի կրած անուսպանքները: Պարզվում է, որ կաթուղի մայրապետների բանասարկութունների հետևանքով նրան պաշտոնազուրկ է անում հիվանդանոցի տնօրեն Լ. Տառյանը: «Իմ գործի համար եղած բանասարկութունը,—գրում է Ծերենցն իր նոթեբրում,—Ֆրանսիացի մայրապետներու՝ այս սուրբ կույսերուն կողմանի, որոնք ամեն ջանք ի գործ կդնեն զիս նետելու համար հիվանդանոցեն, որուն ոռճիկը առանց շատ բարձր լինելու, ինձ համար շատ գոհացուցիչ էր. և, որ եթե խաղաղութիւն վայելէր որոշված լիներ նախախնամութենեն, ևս երջանիկ մարդ մը ինքզինքս կրնայի համարիլ: Բայց աստված այլապէս սահմանած էր»<sup>1</sup>:

Ծերենցի ակնարկած բանասարկութունը հավանաբար պետք է բաղադրական հիմք ունենար, կապ-

<sup>1</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 22, էջ 18:



ված կաթողիկոսության դեմ նրա մղած պայքարի հետ, որը և գրգռել է ֆրանսուհի մայրապետներին և անհանգստացրել հիվանդանոցի հոգաբարձուին: Պաշտոնազրկվելուց հետո նա, հիվանդանում է: Ապաքինվելով տեղեկանում է, որ Կիպրոսում բժշկի պահանջ կա: Կիպրոսը հայտնի էր որպես թուրքական կառավարության արստրավայրերից մեկը. ազգաբնակչությունը քիչ էր և հաղորդակցությունը մայր ցամաքի հետ սակավ: «Ռոշեցի երթալ Կիպրոս, որու աժանությունը կվստահեի և ասածո»<sup>1</sup>, գրում է նա իր նոթերից մեկում:

Ծերենցը աղջկա հետ Կիպրոս է մեկնում 1876 թ. հունվարի սկզբին: Նույն թվականի ապրիլին վերադառնում է Պոլիս. որոշ գործեր կարգավորելով, նորից գնում Կիպրոս: «Երեք-չորս օրեն դարձյալ կերթանք, քանի մը տարի անցնելու մտք,— գրում է Ծերենցի աղջիկն իր բարեկամուհուն, ապրիլի 29-ի նամակում,— վասնզի հայրս գործ մը գտավ հոն և արժան երկիր մը երթալ և էկոնոմի ընել խոհեմություն կհամարի»<sup>2</sup>:

Ծերենցի արխիվում տեղեկություններ կան նրա կիպրոսյան կյանքի մասին: Առանձին հետաքրքրություն է նա հանդես բերել կղզու արստրյալների նկատմամբ: Որպես բժիշկ այցելել է նրանց, մեղմացրել նրանց ցավերը, զրուցել նրանց հետ:

1 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 22, էջ 18:

2 Նույն տեղում, 2-րդ բաժին, № 2, էջ 30 (նամականի):

երբ գնացել է դիտելու բանտը, նրան հարցրել են, թե ի՞նչ հանցանքի համար է եկել, քանի որ «այդ կղզին դատապարտյալք միայն կուգային»: Ծերենցի թղթերից երևում է, որ նա ճանաչել և զրույցներ է ունեցել հուլն, բուլղար, սերբ աքսորյալների հետ և փորձել է զրել մի ակնարկ հայտնի ապստամբ Շեյխ Ահմեդի մասին: Ակնարկը մնացել է կիսատ:

Կիպրոսից Ծերենցը շարունակում է թղթակցել «Արեւելյան մամուլին», կապ պահպանել իր Պոլսի բարեկամների և Զմյուռնիայում՝ Մամուրջանի հետ: Նամակներից երևում է, որ նա ակտիվ կերպով հետևել է թուրքական իշխանության սահմաններում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին: Այդ նամակներում արտացոլված են Նիքոսիայի կամալոք աքսորականի քաղաքական մտորումներն ու հույզերը՝ Պոլսում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ:

Որո՞նք էին այդ իրադարձությունները: 1875 թվականին թուրքական պետության դեմ ապստամբվում են Հերցոգովինիան և Բոսնիան: Նրանց հետևում է Բուլղարիան: 1876 թվականի ամռանը Սերբիան պատերազմ է հայտարարում Թուրքիային: Տեղի է ունենում պալատական հեղաշրջում և թուրքական ռեակցիան դա՛հ է բարձրացնում Արդուլ Համիդին:

Արդուլ Համիդն իր նախորդի նման շարունակում է սահմանադրական խոստումներ անել: Սակայն նույն տարվա սեպտեմբերին հաջորդող դեպ-



քերը ցույց են տալիս Սուլթանի դիվանագիտական խաղերի իրական հետևանքները: Արևմտահայ գործիչների այն մասը, որ տարված էր սահմանադրական պատրանքներով, կանգնում է փակուղու առաջ:

1876 թվականին գրած իր հոգվածներում և նամակներում Մերենցը արտահայտել է տարբեր կարծիքներ, որոնք վկայում են, որ նա թշնամի լինելով սուլթանին և շմոռացած իր վաղեմի երազանքները, այդուհանդերձ որոշ հույսեր է կապել թուրքական պետության խոստացած սահմանադրության հետ: Ռեալիցիոն կառավարության պարապլուս Մահմուդ փաշայի շրջաբերականի առթիվ նա հայտնում է այն կարծիքը, թե «Ամեն իմաստուն կառավարություն որ հայրական է, պարտականություն ունի այդ ազատությունը չէ թե միայն չի վտարելու, այլև տարածելու և սնուցանելու յուր գրկին մեջ, հօգուտ աշխարհիս և հայրենյաց»<sup>1</sup>: Սակայն տեղի ունեցող իրադարձությունները Թուրքիայում հակառակն են ապացուցում: Մինչդեռ պոլսահայ մտավորականությունը դեռ պահպանում էր լոյալ դիրք և հույսեր կապում «անաբլուն հեղափոխության» հետ, ուժեղ չափերի է հասնում հայերի մասսայական տեղահանությունը երկրից: 1876 թվականին «Արևելյան մամուլ» № 1-ում տպագրված իր հոգվածում, անդրադառնալով այդ հարցին

---

1 2. Եիշմանյան, Հրատարակչությանը հավարմունք, էջ 105:

հուսահատված Ծերենցը գրում է, որ եթե անհնարին է կանխել մասսայական գաղթը, ապա անհրաժեշտ է փրկել ժողովրդի կյանքը, թեկուզ և օտար երկնքի տակ համախմբելով՝ նրան ֆիզիկապես չկորցնելու համար: Օտար երկիրնք ասելով նա նկատի ունի Հնդկաստանը, որը, նրա կարծիքով, հարմար վայր էր հայ դաշխականության համար: Ծերենցի մոտ խոսում էր զգացմունքը և ոչ միտքը: Այդ տեսակետը խիստ քննադատում էին Րաֆֆին, Արծրունին և այլ գործիչներ: 1876 թվականին «Մշակ»-ում Րաֆֆին հանդես է գալիս «Գծատուն» վերնագրով մի հոդվածով, որտեղ Ծերենցին անվանում է «խելագար» և դատապարտում նրա «վնասաբեր» տեսակետը: «Մարդու կյանքը,—գրում է Րաֆֆին,—կապված է բնության հետ և նրա մայրը է հողը, եթե հայը կամեր ապագա և կյանք ունենալ, նա պետք է իր ապրուստը հիմնի հաստատուն հողի վրա և այդ հողը թող լինի այն, ուր սրբված և գրնված է մեր նախնյաց արյունով»<sup>1</sup>: Նույն ելակետով է Ծերենցին քննադատում նաև Արծրունին: «Մենք էլ հրեաներ ենք» հոդվածում նա բնական է համարում այն, որ հայերը թեկուզ աղքատ և հողազուրկ ապրեն իրենց հայրենիքում, քան թե հեռու երկրում, կտրելով իրենց բոլոր հասարակական կապերը ազգության հետ:

«Հայուն համար բաց դուռը Հայաստանի հարա-

1 «Մշակ», 1876, № 14:



դատ և թակահար կողմն է,—գրում է Մամուրջանն, իր հերթին,— Արարատա ու Վասպուրականի և Կիլիկիո գավառներն են, որ եթե աշխատությամբ շինվին, կրթությամբ ծաղկին, բնապես պիտի վերականգնին և իրենց պիտի քաշեն, իբրև ազատ ասպադեզ և հայության կեդրոն այն ամեն հեռավոր գավառներն, որ տարբեր իշխանությանց ներքև կտառապին կամ կհայտնվեն և ազատումի ելք մը կ'փնտրեն»<sup>1</sup>։

Ազգային-ազատագրական պայքարի կողմնակից Մերենցը օսմանյան սահմանադրության նույն պատրանքներով տարված, 1876 թվականին «Արևելյան մամուլի» էջերում գրում է. «Մենք կուղենք, որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն։ Վարեն եկած հեղափոխություն (թե որ հաջողի ալ) այնչափ աղետք, այնչափ թշվառություն ունին, այնչափ արյուններու առիթ կ'լինին և հայ ազգը այնչափ քիչ արյուն ունի յուր հրակներուն մեջ, որի կարողութենեն վեր է այդ մասին շռայլ լինիլ և բնդհակառակն վերեն եկած հեղափոխությունը միշտ հաստատ են և երբեք արյան գիներով չեն լինիր»<sup>2</sup>։ Այս լիբերալ ռեֆորմիստական խորհրդածությունները համակել էին այդ շրջանում ոչ միայն որոշ արևմտահայ գործիչների, այլև արևե-

---

1 Մ. Մամուրջան, Անդղլիական նամականի կամ հայտմբ հակատագիրը, Զմյուռնիա, 1881, էջ 215։

2 «Արևելյան մամուլ», 1876, № 10, էջ 349։

լահայ հատվածի ազգային-սահայանողական թեին:

Արծրունու, Րաֆֆու և մյուսների հողվածներում 1876 թվականից առանձին տեղ է սկսում գրավել Արևմտյան Հայաստանի հարցը: Բալկաններում սկսված ապստամբությունը թուրքական բռնապետության դեմ ակտիվացնում է արևելահայ պրոգրեսիվ մամուլի վերաբերմունքը արևմտահայ կյանքի և նրա գործիչների նկատմամբ:

«Մշակն» առաջինն է, որ նվրոպայում արծարծվող «Արևելյան հարցի» հետ է կապում «Հայկական հարցը»: «Մշակի» կարծիքով, Բալկաններում սկսված դեպքերն այն բարեպատեհ առիթն են, որով պետք է լուծվեր և «Հայություն հարցը»: Արծրունին իր հողվածներում արևմտահայերին կոչ էր անում դուրս գալ սուլթանի դեմ, ապստամբել և Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել նրա լծից: «Միթե վերջապես թուրքահպատակ հայերը չեն հասկանա,— գրում է Արծրունին,— որ Թուրքիայի այժմյան անմխիթար դրությունը այնքան հարմար է մարդկային իրավունքները պահանջելու համար՝ որ գուցե դարերով այդ տեսակ հարմար դրություն դարձյալ պատահելու չէ»:

Տնտեսապես և ռազմականապես թույլ Թուրքիան, գտնվելով եվրոպական պետությունների գերիշխանության տակ, նրանց թելադրած քաղաքականությամբ հայերին պահում էր սահմանադրության պատրանքներով: Պաշտոնյանն այդ օրերին միակն էր արևմտահայ գործիչների մեջ, որ



իրապես կանխազգում էր այդ քաղաքականության ծանր հետևանքները և քննադատում արևմտահայ գործիչներին՝ պասսիվ դիրքորոշման և սուլթանի հետ հույսեր կապելու համար:

1876 թվականի վերջերին Մերենցը լսում է, թե ինչպես հուսախաբ պատրիարքը սուլթանի դռներն էր ծեծում, արդարություն պահանջում նոր դահ բարձրացած Աբդուլ Համիդից: Տեղեկանում է, թե ինչպես Գ. Օտյանը և մյուսները, որ մի ժամանակ խանդավառ կերպով Օսմանյան սահմանադրության հետ էին կապում հայության փրկությունը, այժմ համիդյան հալածանքներին ենթակա, պատրաստվում են փրկել իրենց անձը վերահաս վտանգից: Մերենցին տեղեկություններ են հասնում ժողովրդական այն հուզումների մասին, որով պահանջվում էր լուծել արևմտահայ հարցը՝ բալկանյան ժողովուրդների օրինակով: Այդ նոր իրադարձությունները հուզում էին նրան, նոր մտքեր առաջացնում, նոր եզրակացությունների հանգեցնում: Մերենցի հուշերից երևում է, որ կիպրոսյան կյանքի վերջին շրջանում հատկապես, նա ակտիվորեն արձագանքել է քաղաքական իրադարձություններին: Այդ է վկայում նրա ձեռնարկած վեպը՝ «Թորոս Լեոնին»:

Սան-Ստեֆանոյի դաշնագրից հետո հայ ժողովրդի ուրախությունը խորապես համակում է Մերենցին: «Հինգ հարյուր տարիներե վերջ վերջապես այն անտարբեր կարծված ազգը ձայն մը կձգեր

աշխարհիս վրա յուր ազատության փափագ կը հայտնենր,— գրում էր նա այդ օրերի մասին իր հուշերում: «Նիքոսիա,— շարունակում է նա,— երբ Կիլիկիա և Հայաստանի աշխարհացույցները առջևս կհառաչեի, կերևակայեի, թե ինչափ հայ սրտեր կբաբախեն ազգության համար»<sup>1</sup>: Նույն տեղում տեղեկություններ կան այն մասին, որ նա նամակ է գրել Ներսես պատրիարքին «Կիլիկիո վրա և նորա գերագույն դրից վրա խոսելով երկայն»:

Պատրիարքը այդ նամակին պատասխանել է, որ «մենք ևս այդ նույն մտքի վրա եղանք, բայց հիմա մեր ուշադրությունը պարտավորեցանք բուն մեր հայրենիքին Հայաստանի վրա դարձնել»<sup>1</sup>: Սա նշանակում է, որ Ծերենցը առաջարկում է նրան անցյալ տասնամյակում «Բարեգործական ընկերության» անդամներին հուղող վաղեմի երազը՝ Կիլիկիան հենարան դարձնել հայերի տնտեսական-քաղաքական ծրագրերի իրականացման համար:

Ծերենցի աղջկա՝ Թագուկի, նամակներից մեկում տողեր կան, որոնք հավաստում են հոր այդօրինակ ծրագրի գոյությունը: Նա գրում է Մամուրյանին. «Ինչու՞ այսչափ կբարկանաք, վասնզի ազգը քիչ մը կշարժի, վասնզի քանի մը հալիսկոպոս կրցածնին ընելու կելնեն, վասնզի կրնա ըլլալ, որ հողի անկյուն մը և քիչ մը ազատություն տրվի

---

<sup>1</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 17, էջ 2:



հայուն: Ես իմ մասիս պատրաստ եմ, թե որ անանկ-  
բարեբախտություն մը պատահի՝ այդ հողին ան-  
կյունը հորս հետ երթալու: Եվ պինդ անուշն ալ  
(խոսքը տիկին Մամուրյանի մասին է — Ռ. Ն.) իմ  
կարծիքեն է, իսկ թե, որ աս ըսածս չի հաջողի, գո-  
նե հայն ալ հայտնի ըրած կըլլա, թե մինչև հիմա  
կարծվածին չափ անզգա չէ եղեր»<sup>1</sup>:

Ինչպես երևում է փաստերից, Ծերենցը սկզբ-  
բից ի վեր բացասաբար է վերաբերվել անգլիացի-  
ների վարած քաղաքականությանը: Նա քննադա-  
տել է նաև անգլիական օրիենտացիա ունեցող հայ  
գործիչների արտահայտած որոշ կարծիքներ: Ծե-  
րենցի աղջիկը Մամուրյանին զրած նույն նամակում  
կատակով կրկնում է հոր խոսքերը, թե «Մենք քեզի  
հետ ինչ պիտի ընենք թե որ Իզմիր և Պոլիս եր-  
թանք, դուռները գոց գտնենք և տեսնենք, որ Մա-  
մուրին բարեկամ անգլիացիք ամեն տեղ պաշարել  
են»: «Ալի փաշան և արևելյան խնդիրը» հոգվածում  
Ծերենցն ուղղակի հայտարարում է, որ անգլիական  
քաղաքականությունը չի կարող երաշխիք դառնալ  
հայության փրկությանը: «Աս միջազգայնոց գաղա-  
փարները հայտնի են ամենուն, վասնզի խաղաղու-  
թյուն ըսված ժողովրդներուն մեջ նաև իրենց ավա-  
յակ և կործանիչ գաղափարները բարձի գլուխ  
կհռչակեն և կխոստանան գերեզմանաց խաղաղու-

1 ԳԱԹ, Ծերենցի արխիվ, 2-րդ բաժին, № 2, էջ 232—

թյունը աշխարհքիս բերելու»<sup>1</sup>։ Չհամակրելով եվրոպական դիվանագետների վարած քաղաքականությունը, Ծերենցը նույն տեղում տարակուսանքով հարց է տալիս, թե «Ինչ պիտի ընեն ուրեմն աշխարհիս իշխանները. քանի մը թիզ հողու համար իրարու հետ կռի՞վ պիտի ընեն, երբ ամենուն զըլխուն վրա փոթորկալից սև ամպերը կդիզվեն, երբ գետինը ամենուն ոտից ներքև կսասանի»։

Կիսրոսում ապրած տարիներին Ծերենցը հետևում էր նաև ուսսական քաղաքականությանը՝ Թուրքիայի և արևմտահայերի նկատմամբ։ Հոր կարծիքն է արտահայտում Թագուկը, երբ ընկերուհուն դրած նամակում բողոքում է, որ արևմտահայ մամուլը հարձակողական դիրք է բռնել Ռուսաստանի հանդեպ։ «Ի՞նչ կուզեն խեղճ ուսաներեն» վըշտացած գրում է նա։

70-ական թվականներին Ծերենցը իր քաղաքական դիրքորոշման մեջ հիմնականում պահպանում էր 60-ական թվականների երազանքները, քաղաքական նոր իրադարձությունների շրջանում ավելի հաստատելով իր վաղեմի թեզը հայ ժողովրդի ազատության վերաբերյալ։ «Մենք խեղճ անօք-անօգնական հայքս, որ բոլոր ժամանակ ոչ ուրուք վրա հույս ունեինք և ոչ զորություն, այդ գազանաց ամեն շարժմունքին հնազանդելու պարտավորված

---

1 Չ. Շիշմանյան, Հրատարակչությանց հավտրմունք, էջ 91։



պետք է նոցա կամաց հետեւինք, ուստի Կիլիկիո խոսքը բոլորովին մոռցանք կամա թե ակամա: Թեպետ ամեն մտածող հայու ապագա կյանքը այդ երկրին վրա է և պետք է նաև լինի, քանի որ հայը կշնչե աշխարհիս վրա և աչքը հոն պետք է ունենա յուր սքանչելի դրից համար, զոր աստված փոքր ու տկար ժողովրդոց վերջին ապաստարան մը շինած է: Ես Օտյանին գրած էի, երբ Կիպրոս էի և խնդրել էի անգործ շինեալ»<sup>1</sup>:

6

1878—80-ական թվականներին Մերենցը գրել է երեք վեպ՝ «Թորոս Լեոնի», «Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունի»: Մերենցի մասին եղել է երկու կարծիք, այն, որ նա վերակենդանացրել և ժողովրդականացրել է պատմական վեպը, երկրորդ՝ որ նա հանդիսացել է պատմական վեպի հիմնադիրը հայ նոր գրականության մեջ: Առաջին կարծիքը հայտնել է Լեոն, երկրորդը՝ Հովհ. Թումանյանը: Հետագայում գրականագիտությունը ընդունել է երկրորդը: «Երբ ես ենք դառնում դեպի 60-ական թվականները ճանաչելու թե ո՞վ էր էդ հիմնադիր վեպի վարպետը, ձեր սիրտը լցվում է անկեղծ հրեքովանքով, — գրում է Հովհ. Թումանյանը Մերենցի

<sup>1</sup> ԳԱԹ, Մերենցի ֆ., № 17, ԼՋ 3:



մահվան տարելիցի առթիվ արտասանած իր ճառում, չգիտենք նրա ազատասեր ոգու վրա հիանա՞նք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա զարմանա՞նք, նրա հոգու ազնվության ու մաքրության վրա ուրախանա՞նք, թե՞ նրա սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա»<sup>1</sup>։ Պատմական վեպի հիմնադիր համարելով Մերենցին, Թումանյանը շէր կարող անտեսել «Վերք Հայաստանին», որը Խ. Աբովյանը անվանել է պատմական վեպ։ Նկարագրելով իր ապրած ժամանակաշրջանը, հայ նոր գրականության հիմնադիրը ժամանակակից հարցերը դիտել է պատմական տեսանկյունից։ Աբովյանի հետ գրեթե միաժամանակ հեռավոր անցյալի պատմական երևույթների վերադնահատման փորձ է կատարել Մ. Թադիադյանն իր «Վեպ Վարդգեսի» վերնագրով վեպում։ Մերկացնելով ֆեոդալների կենտրոնախույս պայքարը գահի դեմ, նա պաշտպանել է միասնական ուժեղ պետության գաղափարը։

Սակայն Աբովյանի և Թադիադյանի վեպերը 1840-ական թվականներին միայն հիմք են դնում ազգային-հայրենասիրական պատմավիպասանության նոր սկզբունքների մշակմանը։

1860—70-ական թվականներին լայն հետաքրքրություն է ցուցաբերվում ժողովրդի կյանքի ու

<sup>1</sup> «Թումանյանը րննադատ», 1930, էջ 259։



հոգևոր հարստությունների, պատմական անցյալի  
և նյութական կուլտուրայի հուշարձանների նկատ-  
մամբ: Ստեղծվում է հարուստ գրականություն:  
Քննադատության են ենթարկվում պատմական ող-  
բերգությունների և պոեմների մեջ տեղ գտած սխե-  
մատիզմն ու հոգեբանական մակերեսայնությունը:

1871 թվականին «Արևելյան մամուլում» «Իվա-  
նոսի» վեպի թարգմանության առթիվ գրած իր ա-  
ռաջաբանում Մ. Մամուրյանը ընդհանուր ակնարկ  
է նետում գրականության վրա: Նա գտնում է, որ  
հատկապես Մխիթարյանների ստեղծած պատմա-  
գեղարվեստական գործերը կտրված են կյանքից:  
Այդ հանգամանքը նրանց հնարավորություն չի  
տալիս առաջագրելու խնդիրներ, որոնց պահանջում  
է կյանքը, հուզում ժողովրդի սիրտն ու հոգին: Նույն  
ամսագրում Մամուրյանը տպագրում է իր «Սև լե-  
ռին մարդը» վերնագրով պատմական վեպը: Արժ-  
արժեքելով ժամանակի քաղաքական կյանքի պա-  
հանջներն արտահայտող մի շարք հարցեր, Մա-  
մուրյանի վեպն աշնուամենաշնիվ շուներ պատմա-  
դիտական կուռ կոնցեպցիա, որով պետք է պա-  
տասխան տրվեր առաջադրված հարցերին:

Գեղարվեստորեն ավելի թույլ գործեր են Մա-  
մուրյանի վեպից առաջ տպագրված պատմական  
մշուս ողբերգությունները, որոնց հեղինակները ձրգ-  
տել են այս կամ այն շափով արձագանքել արդիա-



կան հարցերին: Այդպիսի դործեր են, օրինակ՝ Հայկունու պիեսները, որոնցից մեկի նյութը («Երբն- ջակ») տոնված է հայ ժողովրդի կյանքից: Պիեսի դադափարական բովանդակության հիմքում ընկած է մի կողմից՝ հայրենիքի պաշտպանության դադա- փարը, մյուս կողմից՝ սոցիալական անհավասարու- թյան հարցը: Նրա հերոսը մեռնում է պատերազմի դաշտում, գերադասելով հայրենիքի սերը անձնա- կան զգացումներից: Նույն դադափարը նա անց է կացնում «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ: Հայ- րենիքի անկախության և նրա միավորման համար մղվող պայքարում ժողովրդի մասնակցությունն արտահայտված է Գ. Պատկանյանի պատմադիցա- բանական պոեմներում: Այդ պոեմներից «Անուշա- վանը» տպագրվում է 1875 թվականին, Զմյուռնիա- յում: Հայ ժողովրդի պատմական-քաղաքական կյանքի պրոգրեսիվ գծերը, գեղարվեստորեն համե- մատաբար լավ մշակված, տրված են Պեշիկթաշ- լյանի «Կոռնակը» վերնագրով պիեսում:

Ծերենցն առաջինն էր, որ անդրադառնալով պատմական թեմային, ջախջախում է մինչ այդ հրապարակի վրա իշխող կղերա-ավանտական պատ- մագիտական կոնցեպցիաները և վարդապետում 40— 60-ական թվականներին գեղարվեստական գրակա- նության մեջ ձևավորված քաղաքական, պատմագի- տական նոր սկզբունքները: Ծերենցի մշակած դա- ղափարախոսությունը սերտորեն կապվում է 70-ա- կան թվականների արևելահայերի հայրենասիրա-



կան շարժման և պատմական վեպի նոր տենդենցներին հետ: Բաֆֆին և Մուրացանը ընդլայնում են պատմավեպի դեղարվեստական մշակման շրջանակները, նոր ընդհանրացումներ անում՝ համակողմանիորեն ընդգրկելով ժամանակակից քաղաքական ազատագրական շարժման ուժեղ և թույլ կողմերը:

Մերենցը իր պատմավեպերով սկիզբն է դնում այդ նոր շրջանի պատմավիպասանությանը:

«Թորոս Լեոնի» վեպի գրության թվականի մասին ճիշտ տեղեկություններ է տալիս հեղինակի գուստրը: 1877 թվականի ապրիլի 3-ին հորեղբորորդուն ուղղած նամակում նա կիպրոսից գրում է. «Գաղտնիք մը պիտի հայտնեմ քեզի: Հայրս հեղինակութուն մը սկսած է «Թորոս Լեոնի» անվամբ վեպ մը, հունվարի 3-ին սկսավ, կեսը անցած է»<sup>1</sup>:

Մի այլ առիթով Թագուկը նշում է, որ «Թորոս Լեոնին» ավարտվել է ապրիլի վերջին: Վեպը հրատարակվում է Պոլսում, անմիջապես տարածվում և մեծ արձագանք գտնում թե՛ արևմտահայ, և թե՛ արևելահայ հատվածներում: «Մերենցի անունն անցավ մեր ժողովրդյան սակավաթիվ մարդկանց անունների շարքը»,—գրում է վեպի հրատարակության առթիվ՝ նրա կենսագիրներից մեկը: Գրողի աղջիկը Ս. Ալիշանին ուղղած նամակում գրել է.

---

1 ԳԱԹ, Մերենցի ֆ., 2-րդ բաժին, № 2, էջ 180:



«Դուք որ Ծերենցի ճշմարիտ բարեկամն եք, — պետք է գիտնաք, թե «Թորոսը» այն աստիճան ազդեցություն բրած է այստեղ, որ գիմնազ դացող աշակերտեն սկսյալ մինչև հայ խմբագիրը և ազուկեցի շաքար ծախողեն, որ կլսե թե Ազուկիս ալ զրկած է քանի մը օրինակ, մինչև քաղքիս նշանավոր տիկնայք կարդացած են»<sup>1</sup>:

«Թորոս Լեոնի» վեպի թեման վերցված է Կիլիկիայի պատմական անցյալից: Ազատության և անկախության համար իրենց կյանքը տված կիլիկացիների հետնորդները՝ հանձին ղեկավարների, իրենց հերոսական դիմադրությամբ դեռևս պահպանում էին հին օրերի ազատության մնացորդները: Այդ պայքարը նոր բովանդակություն ստացավ XIX դարի ընթացքում 1862, 1875 և 1878 թվականների ազատագրական շարժմանը տոն տվող ապրտամբությունների մեջ:

XIX դարի առաջին կեսին արևմտահայ մամուլում երևում են հոգվածներ Կիլիկիայի մասին: 1854 թվականին «Արշալույս Արարատյանում» մենք հանդիպում ենք Ռուբինյան առաջին իշխանների մղած հերոսամարտերի նկարագրությանը: Մի ուրիշ հոգվածում ներկայացվում է Լեոն 6-րդի կյանքի վերջին օրերը: 1859 թվականին Փարիզում լույս է տեսնում Կիլիկյան թագավորության առաջին շրջանի բանաստեղծներից Վահրամ Ռաբունու

<sup>1</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., 2-րդ բաժին, № 2, էջ 247:



շափածո ստեղծագործությունը «Պատմություն Ռու-  
բինյաց» վերնագրով, միաժամանակ նույն շրջանի  
պատմիչ «Տարեգիրք Սմբատայ Սպարապետայ»  
գիրքը երկրորդ հրատարակությամբ: Հրապարակի  
վրա էր 1829 թվականին Թիֆլիսում տպագրված  
Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիո» պոեմը, որտեղ  
բանաստեղծը պատմում էր 1144 թվականին Եղե-  
սիա քաղաքի հայ բնակիչների հերոսական պաշտ-  
պանության ողբերգական պատմությունը: Ղևոնդ  
Ալիշանը գրում է «Ներսես Շնորհալի և պարագայք  
յուր» ուսումնասիրությունը, որտեղ խոսում է Ռու-  
բինյան իշխանության մասին:

Չեռքի տակ ունենալով այս պատմական աղ-  
բյուրները և ուսումնասիրությունները, Մերենցն իր  
վեպում վերականգնում է Թորոս Լևոնի կյանքի ժա-  
մանակագրությունը և նրա հետ կապված պատմա-  
կան իրադարձությունները: Կիլիկիայի առաջին իշ-  
խաններից Լևոն առաջինը 1137 թվականին երկու  
որդիների հետ գերի է ընկնում բյուզանդական  
կայսեր ձեռքը: Հոր և ավագ եղբոր մահից հետո,  
Թորոսը ազատվում է բանտից և, գաղտնի վերա-  
դառնալով հայրենիք, վերականգնում է հոր իշխա-  
նությունը: «Եվ ի՞նչ իմաստուն ու գեղեցիկ է զնում  
նա իր գործի հիմքը, — գրում է Թումանյանը, — իրեն  
հերոս առնելով Թորոս Լևոնին, բյուզանդական  
բանտում փակված հայ իշխանազնը, որը, բանտից  
փախչելով, հասնում է իր հայրենիքը, ազատասի-  
րության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հա-



նում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու»<sup>1</sup>։

Թորոս Լևոնիի հետ կապված պատմական որոշ իրադարձություններ օգտագործել է Գ. Պատկանյանը 1851 թվականին «Արարատ» ամսագրում տպագրած իր «Ոչ ոք չի կարող նախասահմանության կարգը փոխել», ինչպես ինքն է անվանում, վեպում։ Հեղինակի նպատակն է եղել ցույց տալ, որ այն ինչ սահմանված է վերուստ, կյանքը չի կարող փոխել, որ այդ նախասահմանության ուժին ենթակա են ոչ միայն սովորական մահկանացուները, այլև իշխաններն ու թագավորները։ Վեպում չկան պատմական իրադրությունը ներկայացնող վիպական գործողություններ, որոնց մեջ երևար հերոսների քաղաքական ձգտումները։ Նրանք շարժվում են ոչ թե ոեալ իրականության պահանջով, այլ ճակատագրի կամքով։ Ծերենցի վեպն իր ձևով և բովանդակությամբ հիմնովին տարբերվում է Պատկանյանի՝ կլասիցիզմի սկզբունքով մշակված վեպից։

## 7

«Թորոս Լևոնի»-ն սկսվում է 1142 թվականի Բյուզանդիոնի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի նկարագրությամբ։ Հեղինակը ծանոթացնում է մեզ քաղաքի շքեղ թաղերից մեկին, որտեղ գտնվում էին

---

<sup>1</sup> «Թումանյանը քննադատ», էջ 259։



հինավուրց կրկեսը և արքունիքը: Քայքայվող Բյուզանդական կայսրության արտաքին փայլը պահպանած արքունիքի եռ ու զեռը նա հակադրում է քաղաքի մյուս կողմում գոյություն ունեցող աղքատությանը: Այս ֆոնի վրա երևում է հայոց իշխան Լևոնի որդին՝ Թորոսը: Նրան հանում են բանտից, ներկայացնում կայսեր, որը իրավունք է տալիս Թորոսին ապրել պալատում իր հսկողության տակ: «Կարելի չէր սուր աչքի մը իր կորուվի ձեռ չի նկատել,—գրում է Մերենցն իր հերոսի մասին,—թեպետ ինք թույլ և անհոգ կերպ մը առնուլ կձևանար. և աչքերը, որ մարած էին ընդհանրապես հանկարծ ի մոռացության փայլակներ կարձակեին, իր դեռարույս ընշացքն և գանդուր մորուքը մասամբ իր ծնոտը կծածկեին, մազերը գլուխը կպսակեին և այդ զորավոր ու ջղուտ կազմվածքը հագիվ քսան քսաներկու տարու զինք կարծել կուտար տեսողաց. միայն երկու հոնից մեջ խորհրդածության ուղիղ գիծը կրնար մատնել թե այս պարզության տակ խորին խորհուրդներ կծածկվեին»<sup>1</sup>: Մի պահ, իրեն գտնելով պալատական կեղծ, շփացած, անբարտալան պաշտոնյաների միջավայրում, Թորոսը անտարբեղ կեցվածքով ցույց է տալիս իր ունեցած արհամարհանքը, այդ միջավայրի նկատմամբ, արհամարհանք, որն ըստ Մերենցի «կայսերական պալատին գմբեթներեն ալ ավել ավելի բարձր էին» և միաժամանակ «ապագային վրեժխնդրության օրեն-

<sup>1</sup> Մերենց, Երկեր, 1937, էջ 7:



քը կպարունակեն»։ Առաջին իսկ պահից, երիտասարդ հայ իշխանի հպարտությունն ու ազնվությունը հակադրելով շրջապատում տիրող քծնությանն ու կեղծիքին, Մերենցը ցանկացել է ցույց տալ իր հերոսի հոգեկան, բարոյական ուժերի գերազանցությունը, որը շատ շուտով պետք է բարձրացներ նրան ժողովրդական շարժման գլուխ, հարվածներ տալու համար բյուզանդական կայսրության քայքայվող հիմքերին։

Պատմական աղբյուրներում Թորոսի վերադարձի մասին տարբեր տեղեկություններ կան։ Մի դեպքում ասվում է, որ նա, ազատվելով բանտից, մնում է առժամանակ կայսեր հսկողության տակ, ամուսնանում մի հարուստ հույն կնոջ հետ և նրա մահից հետո, ժառանգած հարստությունը վերցնելով՝ գաղտնի մտնում Կիլիկիա։ Մի ուրիշ աղբյուրում պատմվում է, որ նա ազատվելով բանտից՝ փախչում է Կոստանդնուպոլսից, մտնում Կիլիկիա, թաքնվում մի քահանայի մոտ, ապա հայտնըվելով, անցնում հայոց զորքերի գլուխ, ազատում երկիրը բյուզանդացիներից։ Մի երրորդ աղբյուրում նշված է, թե իբր նա Կիլիկիայում մասնակցել է կայսեր արշավանքներին և նրա մահից հետո ապստամբությամբ ձեռք բերել իշխանությունը։ Մեհենցը օգտագործել է հույն կնոջ հետ կապված փաստը և ստեղծել վիպական հետաքրքիր սյուժե։

Վեպում պատմվում է, թե ինչպես արքունիքից Թորոսը իր ծառա Բաբկենի հետ տնրվում է մի



քնակարան: Այստեղ նա հանդիպում է հայկական ծագում ունեցող հուլյն կին Նֆիմեին: Սիրահարված լինելով սկզբում Թորոսի եղբորը, ապա Թորոսին, Նֆիմեն մի քանի օրում կազմակերպում է իր ամուսնությունը նրա հետ և ապա՝ փախուստը Կիլիկիա: Վեպի մեծ մասը նվիրված է Թորոսի պատերազմական գործողություններին և ձեռք բերած իշխանության ամրապնդման նկարագրությանը: Վեպըն ավարտվում է Թորոսի մահով:

Ծերենցը մանրամասն ուսումնասիրել է պատմական այն իրադարձությունները, որոնք հնարավորություն են տվել Ռուբինյան իշխան Թորոսին վերականգնելու պետական իշխանությունը Կիլիկիայում: Համեմատելով տարբեր աղբյուրներում պահպանված փաստերը վեպում նկարագրվող իրողությունների հետ, մենք տեսնում ենք, որ հեղինակին հաջողվել է ճիշտ դիտել և զնահատել պատմական մի շարք նրբություններ, որոնք իրականում օգնել են Կիլիկյան պետության վերականգնմանն ու ամրապնդմանը: Ինչպես պատմությունից, այնպես էլ վեպից երևում է, որ Թորոսը իշխանությունը նվաճում է արտաքին և ներքին խիստ բարդ իրադարձությունների պայմաններում: Նա գործ ունի ոչ միայն Բյուզանդիոսի, այլև Իկոնիայի, Ջինգի, Անտիոքի իշխանների և եգիպտական սուլթանի հետ: Քննելով իր հերոսի ռազմական և դիվանագիտական գործունեության բազմաթիվ մոմենտներ, Ծերենցը կարողանում է գտնել այն հիմնական դիժը, որ



Թորոսին դարձնում է պատմական պրոգրեսի ցայ-  
տուն արտահայտիչներից մեկը: Օգտագործելով  
բյուզանդական պատմիչներից մեկի տված բնութա-  
գիրը, Ծերենցը գրում է Թորոսի մասին. «Ով որ  
աղգային պատմությունն ունի ուշադրությամբ,  
հայ դյուցազանց առաջին կարգին մեջ կնշմարե այս  
մեծ հանճարը, որ ոչ միայն իր ժամանակեն, այլ  
նաև իր բախտեն վեր էր: Իր քաջության հավասար  
էր իր խոհեմությունը, վասնզի գիտեր դժվարին և  
ապերախտ պարագաներեն օգուտ քաղել, գիտեր  
ժամանակին տեղի տալ և սպասել, որ իշխանաց  
առաջին կատարելությունն է, թեպետ ռամկական  
աչքեր չի շլացնե»<sup>1</sup>:

«Ռուբինյանները ունեին այն դրական հատկա-  
նիշը,—գրում է սովետահայ պատմաբան Գ. Մի-  
քայելյանը Կիլիկիային նվիրած իր աշխատության  
մեջ,—որ ձգտում էին բյուզանդական լծից ազատա-  
գրել Կիլիկյան տերիտորիան: Չնայած նրանք եր-  
բեմն ստիպված էին լինում տեղի տալ և ընդունել  
բյուզանդական իշխանության ինքնուրույնությունը,  
բայց երբեք բաց չէին թողնում ոչ մի փոքր հարմար  
առիթ, որպեսզի վերականգնեն անկախությունը,  
դառնան Կիլիկիայի տերերը, որը և ի վերջո հաջող-  
վեց նրանց»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ծերենց, երկեր, էջ 203:

<sup>2</sup> Г. Микаелян, История Киликийского государства,  
1933, стр. 141.



Թորոսը դրսևորում է Ռուբինյան իշխանների պրոգրեսիվ գործունեությանը բնորոշ գծեր՝ երկրի անկախ իշխանությունն ապահովելու, ուժեղ պետականություն ստեղծելու գործում: Ծերենցը հատուկ ուշադրություն է դարձրել այն հարցին, թե ինչո՞ւ Հայաստանը չի պահպանել իր պետականությունը. Հայ պատմիչները հանցանքը բարդել են մեծ մասամբ իշխանների վրա, գլխավոր պատճառը տեսնելով նրանց անմիաբանության մեջ: Գ. Պատկանյանը 1863 թվականին տպագրած իր «Հայոց ազգի պատմության» մեջ փորձել է վերանայել այդ թեզը, բայց արտահայտել է այն սխալ միտքը թե, եթե անմիաբանության մասին խոսք կա, ապա այդ անմիաբանությունը մեղանում սերմանել են «օտարածին» իշխանները: Նա ակնարկում է Արշակունիներին և Բագրատունիներին, բացառություն համարում Մամիկոնյաններին:

Ծերենցի նկարագրությամբ Թորոսն այն մարդն է, որն իր ռազմական տաղանդի ուժով, պետական գործչի մեծ հմտությամբ արագ կերպով վերականգնում է երկրի անկախությունը և իրեն ենթարկում իշխաններին: Երբ կամբրոնի իշխանը, զգալով իր պարտությունը, պատրաստակամություն է հայտնում դաշնակցել նրան, Թորոսը չի համաձայնվում: Նա ուղղակի պահանջում է բերդի բանալիները, այն պատճառաբանությամբ, որ «թի՛վաղը պարագան որ ներե դաշինքին պիտի ստեն,



երգմունքնին ոտնակոխ պիտի ընեն»<sup>1</sup>։ Քննադատելով Լամբրոնի իշխանի վարքագիծը, Թորոսը գրառում է, որ վերջինս իր մեջ տեսնում է ոչ թե պետության սրբագործված ներկայացուցչին, այլ՝ անհատ Թորոսին։ Նա այդ առթիվ Լամբրոնի իշխանի պատգամավորներին ասում է. «Թորոսը բան մը չէ, այլ իր ետին հայությունը՝ այս ամենքը, որ կտեսնես և այն ամենքը, որ Մասիսի ստորոտեն բոլոր աշխարհքիս վրա ցանկցիր կտարածվին օտարին բռնությանց, հարստահարությանց տակ կհեծեն, որոնց կրոնքը, անունը, կյանքը, և ստացվածքը վտանգի մեջ են, այն ամենքը այսօր իմ կոնակս կեցած են, և պետք է զրուցեմ, թե հիմա, այս վայրկենիս, այս հայությունը, որ քո տերդ չի ճանչեր և սրուն համար ես կյանքս արյունս և ամեն ունեցածս կզոհեմ հիս՝ այս խեղճ Թորոսին վրա կկայանա»<sup>2</sup>։

Պետականության հիմքերի ամրապնդման քաղաքականությունը Թորոսը տանում է ոչ թե իշխաններին համոզելու, այլ նրանց իրավունքները և ուժը արագ կերպով շեղոքացնելու և միանձնյա ղեկավարություն հաստատելու միջոցով։ «Ազգի մը բախտը կարողութենեն չէր կախվեր,—գրում է Մերենցը իր վեպում,—այլ ազգին բարոյական զորութենեն»<sup>3</sup>։

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 185։

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 200։



Ազգի բարոյական զորութիւնն ասելով, Ծերեն-  
ցը նկատի ունի կենտրոնաձիգ իշխանութիւնն ամ-  
րապնդող այն ուժերը, որոնք պետք է բռնի միա-  
վորեին ֆեոդալներին, ապահովեին երկրի միաս-  
նական և ինքնուրույն կյանքը և զարգացումը  
հարեան պետութիւնների դաշնակցութեամբ:

«Թորոս Լեոնի»-ի հրապարակ գալուց դեռ  
շատ տարիներ առաջ Ծերենցը գրել է «Ապակենտ-  
րոնացում» վերնագիրը կրող մի հոդված, որտեղ  
անդրադարձել է այն հարցին, թե ինչու Հայաստա-  
նում չպահպանվեց պետական իշխանութիւնը:  
Միիթարյանները այդ հարցը քննելիս մնացին  
պատմադրութեան հնօրյա այն տեսակետին, ըստ  
որի՝ հանցանքը բարդվում էր իշխանների վրա, որ-  
պես անմիաբանների: Ծերենցը հարցը քննում է  
պատմական պրոցեսի մեջ և գալիս միանգամայն  
այլ եզրակացութեան: Նա վերլուծում է հայկական  
ֆեոդալական հասարակութեան և ֆեոդալական պե-  
տականութեան այն առանձնահատկութիւնները,  
որոնք ընդհանուր էին նույն սիստեմն ունեցող մյուս  
երկրների համար: Օրինակներ բերելով Ֆրանսիայի  
պատմութիւնից, նա հայ իրականութեան մեջ տես-  
նում է նույն երեւոյթները: Այդ երեւոյթները պայ-  
մանավորվում էին գլխավորապէս այն հակասու-  
թիւններով, որոնք կային կենտրոնաձիգ պետու-  
թեան և ֆեոդալական կենտրոնախույս ուժերի միջև:  
Այնուհետեւ Ծերենցը ցույց է տալիս, որ ֆրանսիա-  
կան թագավորների համար ստեղծված պատմական



ռեալ հնարավորությունները հասցրին նրանց բացարձակ միապետության ստեղծմանը, բայց հայկական իրականության մեջ այդ պրոցեսն իր վերջնական ձևավորումը չգտավ:

Ծերենցը միանգամայն ճիշտ է դիտում նաև այն, որ չնայած պատերազմների թատերաբեմ դարձած Հայաստանում չստեղծվեցին պատմական ռեալ պայմաններ սեփական իշխանության վերջնական հաղթանակի համար, և երկիրը կորցրեց իր ինքնուրույնությունը, բայց ժողովուրդը իր ուժերով պահպանեց ինքն իրեն և ապրեց դարեր: Նա ակա՛նատես եղավ, գրում է Ծերենցը նույն հոդվածում, «Սասանյանց, Հռոմոց, Սելճուկյանց, Արաբացւոց ինքնակալությանց կործանմանը, երբ ինք տկար եղեգն, հինավուրց կաղնիներն հզորագույն՝ դեռ այսօր երեք մեծամեծ ինքնակալությանց որսամանց մեջ անշեջ մորմենին է և լույս իր ցան և ցիր ժողովրդոց»<sup>1</sup>:

Ծերենցի կարծիքով, Աշոտ թագավորին՝ «այդ երկաթյա մարդուն» հուսահատեցրին ոչ այնքան պատերազմները, որքան այն, որ նա չկարողացավ համախմբել ներքին ուժերը և չստեղծեց կենտրոնաձիգ իշխանություն: «...Արշակունի, Բագրատունի, Արծրունի, Սյունի, Ռուբինյան կանւլանեին, վասնզի բարոյական զորություն մը չունենալի զատ, չգիտցան նաև կեդրոնական զորություն մը ըլլալ,

1 Հ. Եփրեմյան, «Հրատարակչության հավաքածուն», 42 80:



շունեցան գաղղիացւոց պէս սրատես մարդիկ, որ կարենային անկարողութենէ ազատել կեդրոնական իշխանությունը զոր ապակեդրոնացումը ջլատել է», — գրում է նա նույն տեղում: Ծերենցն հանգում է այն եզրակացութեան, որ կենտրոնաձիգ իշխանութեան թուլությունը դառնում է պետականութեան անկման պատճառներից մեկը: «Անոր համար ալ պետք էր, որ նախախնամությունը բարոյական իշխանություն մը հաներ խեղճ հայոց ազգին համար, — գրում է նա, — իշխանություն մը թեպետ բարոյական, բայց կանոնավոր դասակարգութեամբ ժողովրդյան ներքին — արտաքին բռնությունների առած հատվածներում դարման մը ըլլար»:

Ծերենցի պատկերացրած «բարոյական իշխանութեան» ներկայացուցիչներից մեկն էր ահա Թորոսը, որը հանդես էր գալիս կատարելու իր պատմական դերը պետական անկախութեան և իշխանութեան ամրապնդման գլխավոր պայմանը տեսնելով արտաքին ու ներքին հակոտնյա ուժերի ջախջախման մեջ:

Վեպում Թորոսին հակադրված են նրա եզրայրներից Մլեհը, ապա իշխաններից՝ Նամբրոնի Հեթում իշխանը և Անազարբայի տերը: Մլեհը ընթոստանում է Թորոսի ռեֆորմների և միանձնյա ղեկավարութեան դեմ: Նա քննադատում է նրա դիվանագիտությունը և ռազմական գործողությունների ընթացքում դրսևորած զգուշություններն ու հումանիտական ձեռնարկումները: Հեռանալով

պատմական փաստերից, հեղինակը Մլենհին վերադրել է անիշխանության տենդենցներ, բացասական գունավորում տալով նրա կերպարին:

Բացասական կերպարներ են Անաղարբայի և Լամբրոնի իշխանները: Նրանք թշնամի են կենտրոնաձիգ իշխանությանը և միաժամանակ բռնակալ ֆեոդալներ են: Գյուղացի ճորտերը բողոքում են Անաղարբայի իշխանից: «Մեր գեղերը քանդվեցան, մեր տուներն ավերակ դարձան, ինք՝ պալատներ կշինե, պարտեղներ կշինե մեր ավերակաց վրա: Իբրեւմեն աղատք մեյ մեկ ավազակ, մեյ մեկ պատուհաս են դուխներուս վերե, մեր տղայք, մեր աղջկունք իրեն ծառայության և զվարճության համար են ստեղծված. մեր լեզուն, մեր հավատքը հոռոմեն ավելի կնախատեն, օտարին նախատել կուտան»<sup>1</sup>:

Թորոսի ժամանակ Գրիգորիս կաթողիկոսը, ելնելով կենտրոնախույս իշխանների շահերից, ձգտում էր հայ եկեղեցին դարձնել հունադավան: Թորոսը այդ միացման մեջ տեսնում էր սեփական ազգի «սուղման վտանգը»: Մինչդեռ նա երազում էր ստեղծել «զորավոր Հայաստան»: Ներսես Լամբրոնացուն նա ասում է. «հայ եկեղեցվույն փոքր զրոշակը անկախ պահեցեք, ինչպես ես աղգային անկախության զրոշակը անկախ պահելու կշանամ»<sup>2</sup>:

1 Մերենց, Երկեր, էջ 106:

2 Նույն տեղում, էջ 191:



Մերենցը նշում է, որ օտար նվաճողները հայերին իրենց ենթարկելու և տարրալուծելու համար օգտագործել են նաև կրոնափոխությունը: Թորոսը քննադատում է դավաբանական վեճերը և հունադավան կրոնի բացասական ներգործությունը հայության միասնության և կենտրոնաձիգ իշխանության, ինչպես և անկախության պահպանման գործում: Վեպում Անադարբայի եպիսկոպոսին հակադրված է ս. Մակար վանքի վանահայրը: «Պետք չէ մոռնալ, թե որովայնապարար և խաբեբա եկեղեցականաց քով կան գործունյա և աշխատասեր եկեղեցականք ալ, որ իրենց ազգը և ժողովուրդը կսիրեն և գիտեն նաև զիրենք անոնց համար զոհել»<sup>1</sup>:



Ժամանակակիցները «Թորոս Լեոնի» վեպի մասին արտահայտվել են ջերմ և բնագծել հեղինակի տաղանդը պատմական վեպ ստեղծելու գործում: Թորոսի կերպարը հմայել է նրանց որպես հայրենասիրական և հումանիստական գաղափարներով տոգորված անձնավորության: Իր ժամանակին ճիշտ է նկատել Ս. Պալասանյանը, երբ «Թորոս Լեոնի» վեպի մասին ասել է, թե քիչ զիրք կպատահի «Թորոս Լեոնի» նման իր ժամանակին գրված ու հրապարակված:

---

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 95—96:

Վեպի քաղաքական ակտուալ նշանակությունը ընդգծում է հատկապես Ս. Երեմյանը: Իր «Ազգային գեմքեր» վերնագրով գրական ակնարկների մեջ նա գրում է. «Ծերենցը իր «Թորոս Լեոնի» վեպով թուրքահայ գրականության մեջ հեղափոխական դարձումի առաջին նշանը կուտար»<sup>1</sup>:

Վեպում Թորոսը ներկայանում է իբրև ժողովրդի ներկայացուցիչ: «Ժողովուրդը միշտ առաջնորդի պետք ուներ, — գրել է հեղինակը վեպում, — ինչպես ամեն ժողովուրդը ունեցել են և պիտի ունենան հավասարություն, որը Սպարտիո օրենսդիրն անգամ չէր երևակայած՝ անկարելի է, քանի որ բնությունը զմարդիկ հավասար չէ ստեղծած նյութական և մտավորական կատարելությամբ»<sup>2</sup>: Այս միտքը մեզ ծանոթ է հեղինակի նախորդ տարիներին գրած հոդվածներից: Այստեղ ևս նա շարադրում է իր վաղեմի կարծիքը անհավասարության մասին: Այդ անհավասարությունը վերացնողը նրա կարծիքով ոչ թե դասակարգային պայքարն է և նրա հետևանքով առաջացած ռեոլյուցիան, այլ դասակարգերից վեր կանգնած «զոբալոր անհատը», որը բանականության զենքով պետք է նվիրվի ժողովրդին և գործի նրա շահերի օգտին:

Անհատի և ժողովրդի փոխհարաբերության հարցը Ծերենցը դիտում է ուրույն ձևով: Կարևոր

1 Ս. Երեմյան, Ազգային գեմքեր, 5-րդ շարք, էջ 441:

2 Մեհենց, Երկեր, էջ 104:



նշանակութիւնն տալով անհատին, նա նույն շափով տեղ է տալիս և ժողովրդին: Նա գրում է. «Ժողովուրդը միշտ իր սրտին ձայնին և մտքին համոզման հետեւելով, այս իշխանաց և բերդակալաց մեջ զանոնք կվերադասեր, որ առավել ինքնիշխանության և հայրենի հնավանդ կրոնից և սովորութեանց պաշտպան էին և հետևապէս իրենց ազգին անհատից»<sup>1</sup>: Ծերենցի կարծիքով ժողովուրդն է, որ որոշում է անհատի հասարակական կոշումը և նա է, որ ուղղութիւնն է տալիս նրա գործունեութեանը: «Մեր իշխանները... միշտ անտարբեր կմնան,—ասում է Թորոսի թիկնապահ Բաբկենը,—բայց մեր լեռնցիք զանոնք կարթնցնեն, թե որ պետք ալ լինի կրօնադատեն, որ միանան և հնազանդին. թե որ իշխաններուն մնա որ թեպետ քաջ են՝ բայց նախանձոտ և հպարտ, մենք միշտ ողորմելի գերի կլինենք ամենուն՝ հույնին և սարակինոսին»<sup>2</sup>:

Ուրույն նկարագիր ունեն նաև վեպում հանդես եկած ժողովրդի ներկայացուցիչները: Նրանք ուղղութիւն են տալիս Թորոսի մտքին և գործունեութեանը: Բաբկենը վեպի ամենահմալիչ անձնավորութիւններից մեկն է: «Թեպետ հազիւ թե պարզ կարդալ և անունը ստորագրել միայն գիտեր,—գրում է հեղինակը նրա մասին,—արտաքո կարգի խոհուն, անհամեմատ ուժով, տոկուն և անխոնջ

<sup>1</sup> Ծերենց, Երկեր, էջ 104:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 56:

պատերազմի մեջ, անդրդվելի, հավատարիմ և նախանձահույզ ազգասեր մարդ մը էր»<sup>1</sup>։ Վեպում Բաբկենը հանդես է գալիս որպես Թորոսի առաջին խորհրդականը, նրա ուսուցիչը, հովանավորը և պաշտպանը։ «Թորոսը նրա հայրենասեր հույսերու զավակն էր»,—ասում է Բաբկենի մասին հեղինակը։

Վեպում կան հետաքրքիր դիպվածներ, նկարագրություններ, միաժամանակ խոհեր, որոնք զըր-սևորում են Բաբկենի ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը։ Բաբկենը այն կարծիքին է, որ ժողովրդի մարդը պետք է քաջ և հայրենասեր լինի և օգնի իր իշխանին, քանի որ բոլոր դեպքերում նրա մեջ պետք է որոնել երկիրը կառավարելու բն-դունակ մարդուն։ Մերենցի այդ միտքն է ընդգծում Թորոսը, երբ ասում է թե «Լեռնցի ազատ ժողո-վրդյան այս կամավոր հնազանդությունը ղինվորա-կան կանոնաց, հայրենի ազատության երաշխավոր էր»<sup>2</sup>։

Տիրասիրության և հնազանդության այս թեզը գալիս է դասակարգային հասարակարգում հարմո-նիկ հարաբերություններ ստեղծելու Մերենցի նախվ պատրանքից։ Կյանքի վերջին տարիներին նա նո-րից անդրադառնում է այդ հարցին, համարելով այն երկար ժամանակ պետականությունը կորցրած ժողովրդի քաղաքական կյանքի կազմակերպման կարևոր պահանջ։ «Համառոտ խորհրդածություն

1. Մերենց, երկեր, էջ 27։

2. Նույն տեղում, էջ 78։



հոս անտեղի չեմ համարել: Հնազանդություն և կույր հնազանդության վրա շատ խիստ դիտողությունք եղած են: Բայց չեմ գիտեր թե առանց հնազանդության մեծ գործք կրնա՞ առաջ երթալ, գլուխ ելնել: Բանակ մը, գործատուն մը՝ վարժատուն մը, տուն մի առանց գլխավորին: հնազանդության, անգիտություն և անիշխանություն կ'ծնանի... Բայց օրենքները որպեսզի իմաստութեամբ գործադրվին միշտ շնորհքով մարդկանց պիտի առնին: Ամեն բանն ավելի ուրեմն րնտրությանց մեջ մարդիկ պետք է ուշադրութեամբ վարվին»<sup>1</sup>:

Վեպում կարեոր դեր են կատարում Կոստանդինը և Սարգիսը: Առաջինին մենք հանդիպում ենք վեպի սկզբում: Կոստանդինը պատմում է, որ ինքը 5 տարի ճանապարհորդում է Հայաստանում՝ «վասընդի կենաց հուշս մը կ'փնտրեր Կիլիկիայէն դուրս և չէր գտնէր»: Օգնություն չստանալով Կիլիկիայից դուրս, նա իր ուժերով նախապատրաստել է ապրտամբությունը և այժմ Կոստանդնուպոլսում փնտրում է Թորոսին, նրան Կիլիկիա տանելու համար: Կոստանդինը հիշեցնում է Հովնանին («Երկունք Թ դարու») և հանդիսանում նրա նախատիպը:

Բաբկենի, Կոստանդինի և Սարգսի մտքերն ու նրանց գործողությունները ցույց են տալիս, որ Ծերենցը կարեոր նշանակություն է տվել ժողովրդի մղած պայքարին:

<sup>1</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 16, էջ 6:

Ժողովրդական շարժման և Ծերենցի արտահայտած ժողովրդայնության հետ են կապվում վեպում հանդես եկած կանայք: Ահա Թորոսի կինը՝ Նֆիմեն: Նֆիմեի կերպարին մենք հանդիպում ենք Գ. Պատկանյանի «Ոչ որ չի կարող նախասահմանության կարգը փոխել» գործի մեջ: Այստեղ հեղինակը ներկայացնում է մի ձկնորսի աղջկա, որին դերվիշը գուշակում է ամուսնություն Թորոս իշխանի հետ: Պատանի Թորոսը սրախողող անելով նետում է նրան ծովը: Նախախնամության կամքով աղջիկը փրկվում է և տարվում Կոստանդնուպոլիս: Որդեգրվելով մի հույն վաճառականից, նա ամուսնանում է հույն զորավարներից մեկի հետ, որը և շուտով մեռնում է: Բայց քանի որ նախախնամությունը որոշել էր, որ նա պետք է դառնա Թորոս իշխանի կինը, հանդիպում է նրան, խոստովանում իր սերը և կայսեր հաճությամբ ամուսնանում նրա հետ: Նույն նախախնամության կամքով աղջիկը Թորոսի հետ վերադառնում է հայրենիք և վերջինիս կողմից իշխանությունը վերականգնելուց հետո, մեռնում իր ծնողների մոտ՝ հայրենական խրճիթում:

Ծերենցը ստեղծում է միանգամայն նոր կերպար: Նֆիմեն հասարակական-քաղաքական գիտակցությամբ օժտված և հայրենասիրությամբ տոգորված կին է: Նա իր անձնական զգացումները ներդաշնակում է հասարակական-հայրենասիրական պարտքի զգացման հետ, խորապես գիտակցե-



լով վերջինիս անհրաժեշտությունը անձնական եր-  
ջանկության համար: «Մի կարծիք ինձ այն կանանց-  
մեհ,—ասում է նա Թորոսին,—որոնց մտքի ընդար-  
ձակությունը իրենց սրակապանակեն անդին չի կրը-  
նար տարածվիլ»<sup>1</sup>: Նա ոչ միայն օգնում է ամուս-  
նուն ռազմական գործողությունների մեջ, այլև  
դառնում նրա խորհրդատուն երկրի ղեկավարման  
գործում:

Նույն սկզբունքով է կերտված Մարգարիտի  
կերպարը: Նա ներկայանում է մեզ գործողություն-  
ների լայն միջավայրում և դրսևորվում բնավորու-  
թյան տարբեր հատկանիշներով: Նրա հայրը՝  
Անադարբա իշխանը թշնամացել էր Ռուբինյանց  
իշխաններին և ծախել իրեն թշնամուն: Մերենցը  
բավական հանգամանորեն պատկերում է այդ  
միջավայրը, որի մեջ բացառություն է կազմում  
Մարգարիտը: «Թե որ բարի նախախնամության  
մեկ նշույլը Անադարբայի պարխապներեն կրցել է.  
սպրդնիլ, անշուշտ այդ աղջիկն էր և տառապելոց  
միակ հույսը իշ վրա էր, թե որ կարենային հաջողիլ  
իմացնելու անոնց վիճակը, անհողդողդ պաշտպան  
մը կգտնեին»<sup>2</sup>: Մարգարիտը ավելի մոտ էր կանգ-  
նած կյանքին, քան Եֆիմեն, նրա հոգաժուկյան գըլ-  
խավոր առարկան ժողովուրդն էր. նա օգնության էր  
հասնում բոլորին, բուժում վերքերը, թեթևացնում  
մարդկանց ցավերը իր խորհուրդներով: Նա կանգ-

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 25:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 117:

նած էր բռնավոր հոր և տառապած ճորտերի միջև, աշխատում էր մեղմացնել առաջինի «գաղանային բնազդները», հրկրորդի՝ տառապանքները: Հոր մահից հետո ժողովուրդը դարձնում է նրան իր տիրուհին, և այդ օրերից, ինչպես Ծերենցն է ասում, Մարգարիտի իմաստության և գթառատության շնորհիվ, Անաղարբայի իշխանության սահմաններում թագավորում է արդարությունն ու երջանկությունը: «Այս երկու տիկնայք, ասում է Ծերենցը Մարգարիտի և Յֆիմեի մասին, — իրենց գթած ձեռքով շատ ցավեր սփռվեցին, շատ խտություններ մեղմացուցին»<sup>1</sup>:

Վեպի հետաքրքիր կերպարներից է Յֆիմեի դաստիարակ հույն բժիշկ Դիոնեսիոսը: Նա դուրացնում է Թորոսի փախուստը, Յֆիմեի ամուսնությունը և հետագայում խորհուրդներ տալիս Թորոսին իշխանությունը դեկավարելու գործում: Հույն բժշկին հեղինակը օժտել է հումանիստական աշխարհայացքով: Դիոնեսիոսի կարծիքով մեծ մարդու առաջին հատկանիշը պետք է լինի այն, որ ատելությամբ լցվի աշխարհակալների դեմ և մեծ հարգանք ու սեր ունենա թշվառի, քնկածի և առհասարակ մարդու հանդեպ: Հույն բժշկի հումանիզմը սերտորեն կապվում է Ծերենցի առաջադիմական հայացքների հետ: Թորոսին նա խորհուրդներ է տալիս, թե ինչպես պետք է դիտությունը և լուսավորությունը ներգաշնակել պետական գործունեությանը և ստեղ-

<sup>1</sup> Ծերենց, Երկեր, էջ 170:



ծել ուժեղ «տեական Հայաստան»: Դիտնիսիոսի արտահայտած կարծիքների մեջ մենք տեսնում ենք Մերենցի մտքերը:

Հ. Պարոնյանն իր ժամանակին ջախջախիչ քրնհագատության է ենթարկել կլասիցիստական և ռեակցիոն ռոմանտիկական ուղղությունը գրականության մեջ: Խոսելով վերջինիս մասին նա նշում է. «Ներկայացնելով Հայկին, Վարդանին կամ Արտաշեսին, Վ. Հյուգոյի խոսքերը կամ Սոլթբի կարծիքները կդնեն անոնց բերնին մեջ»: Այլ վերաբերմունք է ունեցել նա Մերենցի հանդեպ, բարձր գնահատելով նրա հայրենասիրությունը, արժեքավորելով նրան և՛ որպես հասարակական գործիչ, և՛ որպես վիպագիր: Սակայն Պարոնյանը դեռևս լիարժեք չի համարել Մերենցի կերպարները և նրան անվանել է «մանուկենց»: Ժամանակի ռոմանտիկական գրականության հետևությունը այստեղ ևս պահպանվում էր պատմական դեպքերի մանրամասն նկարագրությունը: Հերոսների անհատականությունը կորչում էր այդ նկարագրությունների մեջ, մինչդեռ հեղինակի նպատակն էր բարձրացնել հերոսին իր միջավայրից: Ուստի և նա մեծ տեղ էր տալիս պայմանականություններին: Գլխավոր հերոսը, տվյալ դեպքում Թորոսը, կանգնում է իրադարձությունների կենտրոնում և իր մեջ մարմնավորում գրական հերոսի բոլոր հատկանիշները: Մյուս հերոսները լրացնում են նրան:

Մերենցն օժտված է վիպական տաղանդով և,

նրան այնուհանդերձ հաջողվել է իր գաղափարները մարմնավորել կոնկրետ մարդկային կերպարներում: Վեպը կարդալիս ընթերցողը զգում է Թորոսի խոհուն, հավասարակշռված անհատականությունը, զգայուն հոգու մեծությունը, Եֆիմեի անսահման քնքուշ հոգին, Մարգարիտի գթառատությունն ու մարդասիրությունը, Բաբկենի իմաստությունը, Կոստանդինի գործնական պաշքարի պոտենցիալ ուժը և այլն: Սակայն չի կարելի ժխտել, որ այդ կերպարները դժված են միակողմանի, նրանք ներկայանում են իբրև հեղինակի մտքերի և բաղձանքների խոսսափողեր: Սկզբունքը երբեմն այնքան է կլանում հերոսի անհատականությունը, որ վեպում հաճախ հեղինակը չի կարողանում մարդկային հոգեբանության տարբեր կողմերն արտացոլող գեղարվեստական պատկեր ստեղծել: Դեպքերը վարդանում են անակնկալ, խափանվում են բոլոր արգելքները: Թորոսն ամեն տեղ հասնում է հաջողության, կատարվում են նրա բոլոր կանխազգացումները:

Վեպում տիրապետողը վառ հայրենասիրությունն է: Մարդկային բոլոր հատկանիշները ձուլվում կամ հակադրվում են այդ գաղափարին: Հերոսները բաժանվում են երկու մասի, հայրենիքին նվիրված անձնվեր մարդիկ և կենտրոնախույս ձգտումներով համակված հայրենիքի թշնամիներ: Կան լավ և վատ մարդիկ, ապա պատմական իրադարձություններ, որոնք հարմարվում են այդ մարդկանց գործու-



նեությանը և նրանց բախումներին: Պատմական դեպքերի մի մասը հեղինակը վերապատմում է այն առանց կոնկրետացնելու մարդկային փոխհարաբերությունների մեջ: Քիչ են օգտագործված պատմական այն աղբյուրները, որոնք նյութ են ծառայում այդ ժամանակաշրջանի Կիլիկիայի ժողովրդի կենցաղի, բարքերի նկարագրության համար:

Այս թերությունները, սակայն չեն նսեմացնում Ծերենցի երկի պատմական արժեքը:

Խոսելով գրականության ճանաչողական արժեքի մասին, Ա. Արփիարյանը 1884 թվականին «Մասիսում» տպագրած իր հոդվածներից մեկում նշում է, որ պատմական կյանքի գեղարվեստական այն վերարտադրությունն է արժեքավոր, որը կարողանում է ճշմարտացի կերպով տալ անցյալը և դրանով օգնել արդիական հարցերի վերհանմանը: Այդ առթիվ նա մատնացույց է անում Բաֆֆոն և Ծերենցին: «Որքան ալ իրենց նյութ ընտրեն տարբեր ժամանակներուն նկարագիրները,—գրում է նա,—բայց ամենուն մեջ տիրապետող ոգին միևնույն է, որով այդ վիպասաններն ճշմարտապես կներկայացնեն հայ ազգի ոգին»<sup>1</sup>:

## 8

1878 թվականի փետրվարին Սան-Ստեֆանոյում կնքվում է ռուս-թուրքական հաշտության պայմանագիր. մասնակցում էր նաև հայկական

<sup>1</sup> «Մասիս», 1884, սեպտեմբերի 7:

պատվիրակությունը՝ ներսես Վարժապետյանի գլխավորությամբ: Պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն, Թուրքիան պետք է ապահովեր հայերի կյանքը և կատարեր համապատասխան ռեֆորմներ: Սան-Ստեֆանոյի դաշնագրությունից հետո Անգլիան գաղտնի դաշինքով ձեռք է բերում Կիպրոսը, խոստանալով օգնել Թուրքիային Ռուսաստանի պահանջները խափանելու գործում: Մինչև Բեռլինի կոնգրեսը, արգեն հայտնի է դառնում, որ Թուրքիան մտադիր չէ փոխել իր քաղաքականությունը հայերի նկատմամբ: Բեռլինի կոնգրեսը օրակարգից հանում է 16-րդ հոդվածը: Արևմտահայ ազգային գործիչների պատրանքները՝ կապված եվրոպական դիվանագիտության հետ հօդս են ցրնդում: Բեռլինի կոնգրեսի որոշման համաձայն, ռուսական զորքերը թողնում են թուրքական հողը, հայերը մնում են ամենածանր վիճակում: Սկսվում են անօրինակ հալածանքներ և կոտորածներ:

Պոլսում հրատարակվող «Փունջ» շաբաթաթերթը գրում է. «Պաշտպանել պետք է ազգությունը ինչ միջոցով ըլլա, եթե բարոյական ազդեցությամբ, եթե բռնությամբ, եթե հեղափոխությամբ, միայն թե հայրենիքը փրկվի»<sup>1</sup>:

«Ազատությունը տրվում է այն ազգերին, սրոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել պի-

<sup>1</sup> Մ. Ներսիսյան, Հայ ազատագրական շարժումները XIX դարի երկրորդ կեսին, 1955, էջ 250:



տեն, — գրում է Բաֆֆին «Մշակի» էջերում, — առանց արյունի ազատություն չկա, որպէս առանց զոհերի փրկություն»<sup>1</sup>:

Հայկական պատվիրակութեան ղեկավար Խրիմյան Հայրիկը, Բեռլինից վերադառնալով, իր ելույթներին մեկում հայտարարում է, որ Կոնգրեսի դռան վրա գրված էր՝ իրավունքը ուժովինն է... որ քաղաքագիտութիւնը գթութիւն չունի և ամեն բանի մեջ շահն է փնտռում, որ իրավունքը սուրի ծայրին է: Հիասթափված արևմտյան դիվանագիտութիւնից նա կոչ է անում սիրել այն երկաթը, որ «Զեյթունի լեռներին կիլի»:

Այս շրջանում Մերենցը թողնում է Կիպրոսը և 1878 թվականի հունիսի 14-ին աղջկա հետ գալիս Զմյուռնիա, այնտեղից Պոլիս: Քաղաք մտնելուն պէս նա իմանում է Բեռլինի դաշնագրութեան արգելանքների մասին, որը, ինչպէս ինքն է ասում, հետագայում, «քրիստոնէից հայն և հույնը շատ զրծգոհ ըրած էր»:

Նրեք ամիս ապրելով Պոլսում, հեկտեմբերին նա ուղևորվում է Թիֆլիս: Իր հուշերի մեջ նա մանրամասն շարադրում է այդ հանապարհորդութեան տպավորութիւնները: Թիֆլիսում նա չերմ ընդունւթյուն է գտնում որպէս «Թորոս Լեոնիի» հեղինակ: Հաստատվելով այստեղ, Մերենցը հայոց պատմութեան, գրականութեան և ֆրանսերենի դասեր է ստանձնում Ներսիսյան դպրոցում և շարունա-

<sup>1</sup> «Մշակ», 1878, N 22, էջ 2:

կում իր հրապարակախոսական և գրական գործունեությունը: Առաջին հոդվածը՝ «Ժամանակի ոգին և հայոց ապագան» վերնագրով, տպագրվում է «Փորձի» 1879 թվականի առաջին համարում: Այդ հոդվածում Ծերենցը շաբաղրում է իր վերաբերմունքը քաղաքական նոր իրադարձությունների նկատմամբ և շարունակում քննադատել անգլիական քաղաքականությունը: «Անգլիան բարոյապես և նյութապես սլատասխանատու է և գործակից է ամեն անիրավությանց,—հայտարարում է նա,—որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղ ունեն 1878 թվականին հունիսի 4-են վերջը»<sup>1</sup>: Շարունակելով իր խորհրդածությունները այդ հարցի վերաբերյալ, նա եզրակացնում է. «Երեսանց է Անգլիո ազատականությունն ու ներդամտությունը»<sup>2</sup>:

Այդ շրջանում Ծերենցի քաղաքական քմերդնումների տեսակետից խիստ բնորոշ են 1879 թվականին վերակազմված «Արարատյան ընկերության» առթիվ նրա գրած հետևյալ տողերը. «Կազմենք ընկերություններ, որոնց նպատակը լինի՝ այն երկրներում մեջ, ուր օրենքը ղորություն չունի կառավարության տկարության համար և ավաղակներ՝ թաթարական հրոսակներ, վրանաբնակ վայրենի ժողովուրդներ, ամեն հարստահարություն իրավունք կհամարին հայուն դեմ, որովհետև նա քրիս-

<sup>1</sup> «Փորձ», 1879, № 1, էջ 205:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 210:



տոնյա է և խաղաղ բնավորութիւն ունի, զինվեմք և զինենք մեր ազգայինքը՝ վանելու համար այդ ավազակաց բռնութիւնքը բռնութեամբ»<sup>1</sup>:

Հարց է առաջանում. ո՞վ պետք է լուծի հայ ժողովրդի հարցը: Բարձրագույն դռան հրովարտակենքը, եվրոպական գիվանադիտութիւնը, Բեռլինի կոնգրեսի փշրանքներով հուսադրված հայ բուրժուական գործիչները, թե՛ ժողովուրդը՝ ինքը: Ծերենցը այդ հարցին պատասխանում է նույն շրջանում գրած իր նոր վեպով:

«Երկունք Թ դարու» վեպի գրութեան և թվականի մասին ճիշտ տեղեկութիւններ կան հեղինակի թողած թղթերի մեջ: 1879 թ. հունվարի 15-ին Ծերենցն իր նոր վեպի առաջին հատվածները կարդում է Արգար Հովհաննիսյանին: Հուշերում հիշատակութիւն կա այն մասին, որ այդ վեպը նա շարունակել է գրել փետրվար և մարտ ամիսներին<sup>2</sup>: Արգար Հովհաննիսյանը սկզբում ցանկութիւն է ունեցել տպագրել այդ վեպը «Փորձ»-ում: Սակայն մեղ հայտնի չէ, թե ինչ պատճառով դրա փոխարեն տպագրել է կղերապահականողական թեի ներկայացուցիչ Եղիշե Գեղամյանի (Հայկունու) ոչնչացնող քննադատութիւնը վեպի մասին:

«Երկունք Թ դարու» վեպը պատկերում է

---

<sup>1</sup> «Փորձ», 1879, № 1, էջ 212:

<sup>2</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 22. (II տետր), 1879 թվականի վերջին օրագրանցումը, էջ 46:

արաբների արշավանքները Հայաստանում 840-ական թվականներին: Արաբական խալիֆը ոստիկանի պաշտոնով Հայաստան է ուղարկում Աբուսեթին: Հայաստանի իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին փորձում է կանխել ոստիկանի մուտքը Հայաստան, խոստանալով հավաքել խալիֆաթի պահանջած հարկը: Այդ ասպատակությունների ժամանակ մեռնում է Աբուսեթը: Ոստիկան է նշանակվում նրա որդի Յուսուֆը: Վերջինս խորամանկությամբ բանտարկում է Բագարատին և անարգել իշխում Հայաստանի վրա: Արաբների սանձարձակ բռնությունները ոտքի են հանում Սասունի, Տարոնի, Վասպուրականի, Նախիջևանի և մյուս գավառների հայ գյուղացիներին: Առաջին ազդակը տալիս են խոսթեցիները, գյուղացի Հովնանի գլխավորությամբ:

Թովմա Արծրունին որպես ականատես պատմում է, թե ինչպես «բնակիչք լերին իբրև տեսին թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն ինքեանք պատրաստել էին զնոյն փարշմանն կրել զոր դաշտալինքը կրեցին: Հասին միաբան բազմութիւնն մեկնազէնքն խոթայ ի հնարս արուստագիտութեանն իւրեանց զոր ի պէտս օժանդակութեան ձմեռայնոյ հնարաւորեալ էին: Եւ բարձեալ աշտեայս յանապազակիրըս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց: Եւ եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ և զպատանդսն Վաս-



պուրականի հանեն յարգելանեն և գերեացն ընդարձակեն զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»<sup>1</sup>:

Նկարագրելով այդ իրադարձությունները, Թ. Արծրունին հիշատակում է ապստամբության զեկավար Հովնանի անունը: «էր ընդ գերեալսն ի լեռնեն Խութայ Հովնան անուն, սա այն էր, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի հայս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն արքունի: Իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն տաճկաց և հառին զլեռնայինսն, ձերբակալ արարեալ, զերանելին Հովնան և տուն կապանօք ի բանդ արքունի»<sup>2</sup>:

Իր առաջին վեպում Մերենցը ամբողջապես կլանված էր միայն Թորոսի պատերազմական և պետական-գիլանագիտական գործունեության առավելությունների գրվատումով, իսկ այստեղ նա հանդես է բերում ժողովրդի ներկայացուցչին, որը ոտքի է հանում գյուղացիներին՝ երկրի անկախությունը սեփական ուժերով վերականգնելու համար: Աշտիշատի ավերակներում Անահիտի տաճարի քրմուհին գուշակում է Հովնանին պայքարի մեծ ասպարեզ. «Պետք է ցույց տաս,—ասում է նա Հովնանին,— օրինակ լինես հայ թշվառ աշխարհի, թե ժողովուրդը ողորմելի արհամարհելի էակ մը չէ, թե

1 «Պատմութիւն Թովմայի Արծրունույ», 1852, էջ 133:

2 Նույն տեղում, էջ 211—212:

յուր արյունը ունի այն ամեն առաքինություն, որով կպարծին նոքա, որ իրենց հարց անվան վրա կգոռողնան և շատ անգամ զուրկ են նոցա առաքինութենեն»<sup>1</sup>:

Վեպի վերջին գլուխներում հեղինակը ուրվագծում է Սասնա ժողովրդի մարտական հայրենասիրությունը: Առանձին վերցրած այդ գլուխները գեղարվեստական ընդհանրացման դրվագներ են, որոնց մեջ արտացոլվում է ժողովրդական շարժման մեծ ուժը: Առաջին խակ էջում սառնամանիքի պատկերը հեղինակը հակադրում է մեծ տառապանքների կրող, բայց «կյանք և մարդկություն շնչող» Սասնա ժողովրդին, որը մաքառում է ահավոր բնության դեմ, իր նիզակով պաշտպանվում դաշաններից և թշնամուց, ոչ միայն պաշտպանվում, — ասում է Մերենցը, — այլև պաշտպանում Մուշում նստած իշխաններին: Վեպը սկսվում է սասունցիների ապստամբության նախապատրաստման նկարագրությամբ: Նկեղեցու հրապարակում երևում են լեռներում ազատություն և ապաստան գտած մշեցիները: Նրանց շուրջն են հավաքվել լեռնցի հայրենակիցները:

Այնուհետև տրվում է քահանայի զենքի կոշող ճառը: Եվ ահա հանդես է գալիս ապստամբության դրոշ բարձրացնող Հովնանը: «Երկու խոշոր աչքեր ուներ, որ երկու փայլուն սլաք էին երկաթյա և թափ

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 229:



կանցնեին, երբ նկատեին դիմացնին սրտին խորը իբր թե կտեսնեին»<sup>1</sup>:

Չնայած տարիներով Հովնանը Բագարաս իշխանի խորհրդատուն էր եղել, բայց անշահասեր լինելով մնացել էր աղքատ: «Նորա ձեռնավությունը, — ասում է հեղինակը, — բանիվ և գործով խեղճերու և անտերներու և նորա ահարկու խստությունը անիրավներու և հարստահարողներու դեմ հայտնի էր»<sup>2</sup>: Մերենցը հավատացնում է, որ ժողովուրդը Հովնանին պաշտում էր որպես սրբի: Գուրգեն իշխանը զննում էր «այդ անսովոր մարդը, որ հայ ժողովրդական տիպն էր. դեմքի վրա հաստատամբություն և կորով հայտնի կերեկներ»<sup>3</sup>: Վասկանուն իր հուշերի մեջ երազանքով մտաբերում էր «Սասնա առյուծա-կորյունը յուր քսան տարիներու մեջ նորա լայն ճակատը և մեծ գլուխը սև մազերով պսակյալ, որ ուներուն վրա կիջնեին, նորա կայծակնափայլ աչքերը, որ յուր ակնարկին առաջ կըխոնարհեին և կրաղցրանային»<sup>4</sup>: Առանձին պահիրին Հովնանը «ամեհի առյուծ էր», «ձեռքը առյուծաթաթ էր», «աչքերը կայծակնափայլ էին», հայացքը «շեշտակի էր»: Երբ Հովնանը նկատում է Սմբատ Բագրատունուն, վազում, կանգնում է կի-

1 Մերենց, Երկեր, էջ 212.

2 Նույն տեղում, էջ 223:

3 Նույն տեղում, էջ 217:

4 Նույն տեղում, էջ 327:

սակործան պատի վրա «և մեծ ձայնով, որ ձիերուն  
սալասմբակ շառաղմանը հաղթանակեց, գոչեց  
հանկարծ և ամեն արշավանք կարկամեցավ»<sup>1</sup>։

Վեպում եղած նկարագրությունները ցույց են  
տալիս, որ Մերենցը իր ժողովրդական հերոսի կեր-  
պարը կերտելիս նկատի է ունեցել Սասնա ժողո-  
վըրդի երգերում պատկերված դուլցազուններին և  
իւր հերոսին օժտել է նրանց հատկանիշներով, մար-  
մնավորելով ժողովրդի հոգին, շունչը, կորովը,  
հաստատակամությունը, համարձակությունը։ Վե-  
պում նկարագրված առանձին զրվագներից երևում  
է, որ ժողովուրդը բամբիւնների վրա երդեր է հորի-  
նել Հովնանի մասին և նրա օրինակով ազատա-  
գրական պայքարի կոչ արել։

«Երկունք»-ում Մերենցը բնորոշում է այն, որ  
ազատագրական շարժումների մեջ գլխավոր դերը  
պատկանել է ժողովրդին։ Հովնանը ժողովրդական  
պայքարի ասպարեզ է մտնում այն համոզումով, որ  
իշխաններն իրենց ըմբռնումներով և ձգտումներով  
չեն կարող օգտակար լինել ժողովրդի ազատագրա-  
կան շարժմանը։

Հովնանը վստահում և հավատում է Գուրգենի  
հայրենասիրությանը և նվիրվածությանը, բայց  
նրա մեջ չի տեսնում այն ուժը, որը կարող էր նրան  
բարձրացնել ժողովրդական ղեկավարի աստիճա-  
նին։ Նա ասում է. «...և այն կցավիմ, որ մենք կրնա-

---

<sup>1</sup> Մերենց, երկեր, էջ 293։



չինք անկատար և առանց ուրիշի օգնութեան այդ երկու ինքնակալութեանց նաև դիմադրել և մեր երկիրը պաշտպանել, եթե այդ հիմար նախարարական և ազնվապետական կառավարութեան ձեռ շունհայինք, որ մեր ազգը հարկուր կտոր ընելով յուր քռավորաց գերին է ըրեր»<sup>1</sup>:

Որոշակի դուրս գալով ազնվականութեան դեմ, Մերենցը համարել է նրան «բաղձադիւսյան վիշապ» և նրա կենտրոնախույս քաղաքականութեամբ ու հակաժողովրդական դիրքորոշմամբ է բացատրել ժողովրդի տնտեսական-քաղաքական միավորման անհնարինութիւնը: Դրանով նա արձագանքում էր նաև հայութեան համար ստեղծված քաղաքական կացութեանը: Նա ընդմիջում է ազգի անունով խոսող բայց իրականում նրան վաճառող ազգային ժողովում նստած հայ «իշխանութեան» կարգադրիչների դեմ, որոնք տնտեսական շահերով կապված լինելով թուրքական ինքնակալութեան և եվրոպական պետութիւնների հետ, համաձայնողական քաղաքականութիւն էին վարում՝ կործանման վտանգի առջև կանգնեցնելով ժողովրդին: «Ուր որ հայ կա,—ասում է նա Գուրգեն իշխանին,—պետք է միաբանին և առանց նախարարաց իրենց գլխուն ճարը տեսնեն, ան ատեն թերևս հայ ազգը իր փրկութիւնն գտնե»<sup>2</sup>:

---

1 Մերենց, Երկեր, էջ 280:

2 Նույն տեղում, էջ 218:

«Գյուղացին» գլխում Գուրգեն իշխանի թիկնապահ Վահրիճը դրուցում է համագյուղացիներին հետ։ Այս դրույցից պարզվում է, որ ոչ միայն Հովնանը, այլև գյուղացիները զգում են իրենց իշխանների քաղաքական վարքագծի իրական իմաստը։ Գյուղացի Կարապետը ասում է. «Իշխանի, նախարարի, եպիսկոպոսի, վարդապետի գործը շատ դյուրին է, եղբայր, մենք ժողովուրդս մտածենք, որ իշխանին էլ, քահանային էլ, ավաղակին էլ հասնելու ենք, տալու ենք»<sup>1</sup>։ Գյուղացի Կարապետը պատմում է, թե ինչպես թշնամու ասպատակությունների ժամանակ իշխանները փախչում, մրտնոմ են իրենց ամրոցները. «վերեն կնայեն թե անօրենը ի՞նչ կրնե, ի՞նչպես կսպանեն, ի՞նչպես գերի կտանի, ի՞նչպես կայրե, ին՞չպես կհափշտակե։ Եվ երբ նա կերթա, կիջնեն իրենց ծակերեն, ժողովուրդը կկսկծան և կհորդորեն, որ նորեն ցանեն, նորեն հնձեն, նորեն շինեն. ահա մեր վիճակը»<sup>2</sup>։

Հովնանը ներկայանում է կաթողիկոսին և համարձակորեն իշխաններին ներկայացնում իր ծրրագիրը։ Ո՞րն է այդ ծրագիրը. ստեղծել «ժողովրդոց բանակ» և սպառնալիս սկսել առանց իշխանների։ Մերենցը չի խորանում Հովնանի առաջադրած քաղաքական ծրագրի բովանդակության մեջ, բայց պատմությունը մեզ հուշում է, որ Հով-

1 Մերենց, Երկեր, էջ 248—249։

2 Նույն տեղում, էջ 249։



նանի ապրած դարաշրջանում այդ ծրագիրը բնորոշ էր գյուղացիական ապստամբությունների մի մասին: Ահա թե ինչ է ասում այս առթիվ իշխաններից մեկը. «Այս ինչ խնդիրներ, այս ինչ հրավերներ են, որ այդ հիմար լեռնցի մարդը հկեր այստեղ այսպիսի ժողովքի մը կհամարձակի առաջարկել և մենք հաղար անգամ ավելի հիմար կլինենք, եթե այդպիսի առաջարկությունց համբերենք: Մենք երթանք նստենք ամրոցները և մեր շինականք զինվին պատերազմի, որպեսզի ղենքերնին վաղը մեզի դարձնեն և դուք այդպիսի խոսքեր լսելու համբերություն ունի՞ք»<sup>1</sup>:

Ծերենցը մեզ ուզում է ասել, որ իշխանները Հովնանի ծրագրի հտեում տեսնում են նույնիսկ սոցիալական շարժման ահաբեկող նշանները: Նա ոգևորված իր ծրագրով, Բուղայի պատգամավորներին ուղղած խոսքերի մեջ պարծենում է, որ իր իշխանությունն սահմաններում «ոչ իշխան կա, ոչ նախարար, ոչ ազնվական, ոչ ազատ, բայց ոչ մի ծառա և մի գերի»<sup>2</sup>:

«Երկունք Թ դարու» վիպը տարբեր արձագանքներ է գտել մեր գրականության մեջ: 1880 թվականի «Փորձ» ամսագրի № 9-ում հանդես է գալիս կղերա-պահպանողական թևի ներկայացուցիչ Եղիշե քահանա Գեղամյանը (Հայկունի) և քրն-

1 Ծերենց, Երկեր, էջ 275:

2 Նույն տեղում, էջ 291:

նության առնում Ծերենցի այդ վեպը: Վերհանելով վեպի սյուժեն ներկայացնող պատմական իրադարձությունները, Գեղամյանը անդրադառնում է հատկապես Հովնանի կերպարին: Հատվածաբար մեջ բերելով գլխավոր հերոսի արտահայտած մտքերը, նա գալիս է այն եզրակացության, որ կարիք չկար վեպ գրել, կենտրոնում ունենալով այնպիսի հերոս, ինչպիսին Հովնանն էր: Շինծու համարելով այդ կերպարը, Գեղամյանը գտնում է, որ գյուղացիական ապստամբությունը Ծերենցի ցույց տված ժամանակաշրջանում ոչ մի դեր խաղալ չէր կարող ազատագրական շարժման մեջ, քանի որ Բագրատունիներն էին, որ փրկեցին Հայաստանը և հաստատեցին թագավորություն: Այս եզրակացությունը Գեղամյանի մոտ պատահական չէր:

Բուրժուական պատմագրությունը, ինչպես և կղերա-ավատական մտայնությունն իր ժամանակին զարգացրել է այն միտքը, թե անցյալում ազգային ազատագրական շարժումները սկիզբ են առել իշխանական միջավայրում: Այդ տեսության հիման վրա է, որ հետազայում կեոն ևս իր «Ռուսահայոց գրականության պատմություն» գրքում Ծերենցի ներկայացրած ազգային ազատագրական պայքարը համարում է «անախրոնիզմ»: Այդ կապակցությամբ էլ նա գրում է. «Հասարակ ժողովուրդը երբեք չկանգնեց ազնվականության դեմ իր իրավունքները պաշտպանելու համար, ոչ մի ժամանակ խռովության, ապստամբության կամ այլ



միջոցով, չհայտնեց իր անբավականությունը, իր բողոքները»<sup>1</sup>:

Հովնանի ապրած էպոխան Արշակունիների դինաստիայի անկումից մինչև Բագրատունիների իշխանության շրջանը հայտնի է գյուղացիական ազատագրական ապստամբություններով՝ Պավլիկյանների, Բաբեկի, Թոնդրակեցիների: Սմբատ Զարեհավանցին, որ ապրել և գործել է Հովնանից հետո, ծագումով գյուղացի էր և իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկը: Նա ունեցել է ազգային ազատագրական պայքարի լայն ծրագիր, որն ուղղված էր ոչ միայն օտար, այլև սեփական աշխարհիկ և կրոնական բռնակալների դեմ:

Ժխտելով վեպի գաղափարախոսության պատմական պրոգրեսիվ իմաստը, Գեղամյանը ուղղակի ծաղրում է Հովնանին, հայտարարելով թե «շատ հազվագյուտ բան է որևէ ազգի մեջ տեսնել, որ Հովնանի նման հեղափոխիչ ապստամբ մարդկանց համանման հանդուգն ձեռնարկություններում կաթողիկոս ավագանին կամ այլ պաշտոնական մարմիններ բացարձակաբար միաբանին»<sup>2</sup>: Եվ քրե-նադատը զարմանում է, թե ինչպես է որ այդ ավագանին ձերբակալելով Հովնանին, անմիջապես չի ուղարկել նրան ամիրապետին:

---

<sup>1</sup> Ան, Ռուսահայոց գրականությունը, II հրատ., 1928, էջ 219:

<sup>2</sup> «Փորձ», 1880, № 9, էջ 208:

Կարլ Մարքսը գնահատելով Լասալի «Ֆրանց-ֆոն Զիկինգեն» պատմական ողբերգությունը, մեղադրել է հեղինակին այն բանի համար, որ նա ակտիվ դերը տալով ազնվականներին, դրվատել է նրանց ռեակցիոն ձգտումները, անտեսելով նույն ժամանակաշրջանում գյուղացիների և քաղաքային տարրերի ռեուլյուցիոն տրամադրությունները: Այստեղից ելնելով, պետք է ասել, որ Ծերենցի դրական կողմն այն է, որ ներկայացնելով Բազրատունյաց իշխանության նախօրեի իրադարձությունները, Բազրատունիների մեջ չէ, որ նա տեսել է ժողովրդի անկախության երաշխիքը, այլ ժողովրդական այն ուժի մեջ, որը ետ մղեց թշնամական հորդաններին, հնարավորություն տալով Բազրատունիներին վերականգնելու հայկական պետականությունը: Պատմական դեպքերի այդ ճշմարիտ մեքենայում էլ ահա նա վեպի գլխավոր հերոս է դարձրել ոչ թե Բազրատունյաց իշխանին, այլ գյուղացի Հովնանին:

Անձնագոհության, հերոսականության, անշահասիրության, ժողովրդասիրության և հումանիզմի բարձր հատկանիշներով և պայքարի մեծ կոթովով օժտված այդ նոր անհատի միջոցով Ծերենցը ազդարարում է քաղաքական այն տրամադրությունները, որով տոգորված էր այդ օրերի արևմտահայ գյուղացիությունը: Հովնանը անցել է կյանքի դժվարին ճանապարհ: 15 տարեկանից իր ընդունակություններով աչքի էր ընկել և դարձել



Քաղաքատ Բազրատունու խորհրդականը: Բազրատունու քրոջը՝ Վասկանուշին սիրելու համար երկար տարիներ տառապել է մուլ ղնդանում և փախչելով՝ սկզբում առանձնացած կյանք է վարել իր հայրենակիցների հետ և երբեմն իջել լեռներից, ժողովրդի շահերից ելնելով իշխաններին միջնորդելու նպատակով: Վեպում նա հանդես է գալիս այն ժամանակ, երբ դառնում է ապստամբության առաջնորդ և սկիզբ դնում համաժողովրդական շարժանը: Հովնանը երբեք չի խոսում իր անձնական կյանքի կամ հաջողությունների մասին: Նա ժողովրդական ապստամբ է և գիտե թշնամու հետ անողորմ դատաստան տեսնել՝ հանուն ժողովրդի շահերի, բայց և միաժամանակ կարող է արտասվել թշնամու որբացած մանուկների համար, կարող է սիրած կնոջ առջև հեկեկալ երկար տարիների անջատումի տառապանքները հիշելիս:

Կյանքի արհավիրքների մեջ տոկացող, աննրկուն, հաստատակամ և ղուսպ այդ մարդու մեջ հեղինակը դրել է անսահման քնքուշ հոգի: Իր ապրած ժամանակի օրենքների կամքով աշխարհի առջև փակ մնացած Հովնանի խորը զգացումները վերջին անգամ բացվում են Վասկանուշի հետ ունեցած տեսակցության ժամանակ: Տարիների տառապանքների մեջ շմարած սերը միջնադարյան վանքի մուսյլ պատերի մեջ արձագանքում է իբրև մարդու անհատականության հաղթանակը դաժան իրականության մեջ: Վասկանուշը և Հովնանը հա-

մոզվում են, որ աստված և բնությունը մարդուն  
օժտել են ազատ ապրելու իրավունքով, մինչդեռ  
մարդկային հասարակությունը կաշկանդել է այդ  
իրավունքը, բնության անսահմանափակ օրենքները  
«ծամածուել հանդգնել է», մարդու ազատ կամքի  
առջև կանգնեցնելով դասակարգային պատենշներ:

Պատմական անցյալի ժողովրդական ապրս-  
տամբությունների ֆոնի վրա Մերենցը, հանձին  
Հովնանի, ստեղծել է գյուղացի մարդու բարձր ան-  
հատականությունն արտահայտող ամբողջական  
կերպար: Սակայն նրան օժտել է որոշ երկվություն-  
ներով, որոնք հնարավորություն չեն տալիս մինչև  
վերջ գնալու ժողովրդական ցասումով, ինչպես և  
իր անհատականությամբ բացած մեծ ճանապար-  
հով: Տաճարի քրմուհին դուշակում է Հովնանի  
բնավորությունը. «Դու խառնուրդ ես ղինվորի և  
քահանայի. դու խառնուրդ ես հավատո և թերահա-  
վատության, դու խառնուրդ ես քաջության, եթե ոչ  
երկյուղի՝ դոնե կասկածանաց»<sup>1</sup>: Բնավորության  
այս գծերը ցայտուն կերպով արտահայտվում են  
նրա գործունեության ընթացքում: Ժողովրդի մի  
մասը ազատելով Բուղայի ձեռքից, Հովնանը հնա-  
րավորություն ունի շարունակելու պայքարը, բայց  
նա այդպես չի վարվում: Այն ժամանակ, երբ նրա  
անունը սարսափ էր տարածել թշնամու բանակում,  
նա թողնում է ամեն ինչ, իջնում քաղաք, կրկին

---

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 224.



հանդիպում Սմբատ Բագրատունուն, համոզում նրան ապստամբության գլուխն անցնելու։ Այստեղ էլ ընդհատվում է Հովնանի կյանքը։

Վեպի հետագա գործողություններում կորչում է մեծ ապստամբի հետքը, թուլանում ժողովրդական շարժման գեղարվեստական նկարագիրը։ Դրա փոխարեն հրապարակ են գալիս Գուրգեն իշխանի արկածները, որը ավարտվում է նրա անձնական հաջողությունների նկարագրությամբ։

«Երկունք Թ դարու» վեպում Ծերենցը առանձին ուշադրություն է նվիրել նաև Գուրգեն Արծրունի իշխանի կերպարի մեկնաբանությանը։ Հեղինակը ներկայացրել է նրան որպես ֆեոդալական քայքայվածության, ասպատակությունների հետևանքով բախտի քմահաճույքին ենթարկված, հալածված և իշխանական բնավորությունը թողած հասարակ մի մարդ։ Ականատիս լինելով հասարակության մեջ տիրող հակասություններին և բռնության ծանր հետևանքներին, մարդու մասին նա հանգում է ամենաբացասական կարծիքի. «Ամեն տեղ մարդ նույն գաղանը տեսա՝ վատ, հաշաղկոտ, շողոքորթ, անգութ, գոռոզ, հաջողությանց մեջ, անարգ՝ ձախորդության մեջ, վերջապես մարդ՝ ողորմելի կենդանի»<sup>1</sup>։ Վեպի սկզբում նա տարված է իր սիրած աղջրկա՝ Հեղինեին որոնելու և անձնական երջանկության մեջ կյանքը տնօրինելու պատրանքներով։

1 Ծերենց, Երկեր, էջ 231։

Սակայն երբ պարզվում է, որ սիրած աղջիկը, դավադրութեան զոհ դառնալով, ամուսնացել է, կյանքը նրա համար կորցնում է իր իմաստը: Նրան նորից կյանքի է կոչում իր սիրած աղջիկը, որն ասում է. «Ապրե՛ ազգիդ համար, ապրե ժողովրդյանդ համար, որուն պատիվը, կյանքը, ստացվածքը՝ շատ ժամանակներն իվեր արհամարջալ, ոտնակոխ եղած է և կլինի»<sup>1</sup>: Ոգեշնչված Գուրգեն իշխանը վերածնվում է և մտնում ժողովրդի մեջ, մտերմանում գյուղացիների հետ, ծանոթանում նրանց ցավերին և հետո միանալով Հովնանի կազմած «վրեժխնդիր» գնդին՝ հարձակվում է Բուղայի զորամասերի վրա, ջարդում նրանց, իսկ Հովնանի մահից հետո մեծ արկածների հանդիպելով նվաճում է իր հայրենական կալվածներից մեկը, օգնում Բագրատունիներին հայկական իշխանությունը վերականգնելու գործում:

Գուրգենը ոչ միայն իդեալական իշխանի կերպար է, այլև հասարակ ժողովրդի հոգեբանություն ունեցող անհատ: Հովնանի նման նա ևս օժտված է դուրսագնական բարեմասնություններով, ունի «հսկա հասակ», «արծվի աչքեր», «ահագին բազուկ», «լայն կուրծք», «տրդատաբար շարժվող սուր» և այլն: Քառասուն հոգով նա հազար մարդու գեմ է ելնում: Հովնանը ծանրախոհ է, վարում է ասպետական կյանք, իսկ Գուրգենը շարժուն է,

<sup>1</sup> Մեռենյ, Երկեր, էջ 267:



գործնական և կենսութախ: Բայց նրանք երկուսն էլ աչքի են ընկնում հայրենասիրութեան նույն զգացումներով: Գուրգենի կերպարը մշակելիս Մերենցը օգտագործել է պատմական վեպերում ներկայացված «հիգալդոնների» կերպարներին հատուկ որոշ դժեր:

Սմբատ Բագրատունին հայոց սպարապետն էր: Հովնանը ցանկանում է, որ նա դեն նետի իշխանական հանդերձը և իր ձեռքը վերցնի ժողովրդի առաջնորդի դավադանը: Սմբատ Բագրատունին նրա աչքին աղնվականութեան ներկայացուցիչը չէ, այլ քաղաքական այն գործիչը, որը ի վիճակի է քաղաքական այդ իրադրութեան մեջ անցնել ժողովրդի գլուխը և իրականացնել նրա ազատութեանը: Բացասելով նախարարութեան դերը, Հովնանը կողմնակից էր, որ «Հայաստանի գլուխ մը միայն ունենա, որ ժողովուրդ մը լինի, մի հոտ և մի հովիվ»:

Սմբատ Բագրատունին չի արդարացնում Հովնանի հույսերը: Անհաջող դիվանագիտությամբ նա ենթարկվում է Արաբական խալիֆայթին և վերջում դերի գնում Դամասկոս: Վեպում բավական հաջող են տրված Սմբատ Բագրատունու «հոգեբանական վերապրումներն ու ավայտանքները: Հովնանք սկզբից ևեթ գուշակում է Սմբատ սպարապետի վարած քաղաքականութեան ծանր հետեանքները:

Մերենցը փորձում է դրական գծերով օժտել նաև Աշոտ Բագրատունուն: Եթե նրա հայրը իշխանների ժողովում մերժում է Հովնանի առաջարկած

պլանը և բանտարկել տալիս նրան, ապա Աշոտը ազատում է նրան բանտից և իր սուրբ տալիս «ժողովրդի մարդուն»։ Դա առաջին համաձայնագիրն էր, որով Բագրատունյաց իշխանը ցանկանում էր մոտենալ ժողովրդական շարժմանը, ղեկավարել այն։ Եվ պատահական չէ, որ Հովնանի առաջադրած ծրագրից հետո երիտասարդ իշխանների ժողովում, Աշոտ Բագրատունին հանդես է գալիս մի երկրորդ ծրագրով, որի տակ կարող էր ստորագրել և Հովնանը. «Ազգի մը սլարտավորություն ինքզինք զորացնելն է և այս զորության համար միություն մը կազմել պետք է անբակտելի։ Մեր բոլոր թշվառությանց աղբյուրը զորավոր կապ մը չունենալն էրես կը ծնանի»<sup>1</sup>։

Այնուհետև Ծերենցը նկարագրում է այն իրադարձությունները, որից հետո Աշոտ Բագրատունին ձեռք է բերում իշխանությունը։ Դա հետևանք էր այն բանի, որ 851—855 թվականներին ծավալված ժողովրդական ապստամբությունը մեծ հարված հասցրեց խալիֆաթի հիմքերին, ջլատեց նրա ուժերը։

Ծերենցը զգում է ժողովրդական ուժի կենսունակությունը։ «Ամեն մտածող մարդ կրնար զարմանալ և մինչև այսօր կարող է զարմանալ,—գրում է նա,—երբ լավ խորհրդածե, թե այդ ոտնակոխ Հայաստանի ժողովրդոց մեջ ի՞նչ աստիճանի կեն-

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 286։



սական զորություն կար, որ անշափ թշվառությանց, այնչափ տառապանաց փոթորիկներն վերջ երկիրը կխլրտեր և կսկսեր շեննալ»<sup>1</sup>։

Վեպն ավարտւում է «Երկունք» օպերմիստական վերջաբանով։ Հաղթում է հայ ժողովուրդը, և այդ հաղթանակի արտահայտությունը լինում է սեփական պետության վերականգնումը։

Վեպում հանդես են գալիս նաև կանայք, որոնք իրենց անձնական դժբախտությունների պահին անդամ բարձր են պահում իրենց հասարակական պարտքի գիտակցությունը իբրև ժողովրդին նըվիրված շերտ հայրենասերներ։

Հայ ժողովրդի պատմությունը V դարից սկսած հիշատակում է հայրենանվեր գործունեությամբ, իրենց անունը սերունդներին թողած կանանց անուններ։ Նրանցից առանձին դեմքեր գեղարվեստական մարմնավորում են ստացել Ներսիս Շնորհալու պոեմում, միջնադարյան պոեզիայի մեջ և մինչև Ծերենցը, հայ նոր դրականության և դրամատուրգիայի առանձին գործերում։

Ծերենցի հերոսուհիները «Թորոս Լևոնի» վեպում՝ Եֆիմին և Մարգարիտը, «Երկունք»-ում Վասկանուշը, Հեղինեն, ինչպես և հաջորդ վեպում հանդես եկած կանացի կերպարները ամենաբազմադան ձևով դրսևորում են իրենց հայրենասիրությունը։

<sup>1</sup> Մեռնց, երկեր, էջ 401։

Վասկանուշը և Հեղինեն իշխանուհիներ են, բայց այդ իշխանական դասի սովորույթների և ներքին հակասությունների զոհերը: Իսկ Հռիփսիմյաց տիկինը, ժողովրդի իմաստությունը ճաշակած, իշխանական դասի հակասություններին խորամուխ, քաղաքական մտածող է և միաժամանակ տանջահար մայր: Նրանք հանդես են գալիս կործանելու հին հասկացողությունները, քարոզելու մարդու անհատականությունը հաստատող բարձր գաղափարներ: Վասկանուշը դատապարտվում է վանական կյանքի այն բանի համար, որ համարձակվել է սիրել գյուղացի Հովնանին, նրա մարդկային արժանիքները բարձր դասելով ազնվական ծագումից:

Վասկանուշը վեպի գլխավոր հերոսուհիներից է: Նա մեծ հեղինակություն է ձեռք բերել վանքի շրջապատում ապրող հայ գյուղացիների մեջ իր արդարադատությամբ, գլխառատությամբ և առատաձեռնությամբ: Հեղինակը պատմում է, որ նրա իշխանության շրջանակներում վերացել էր հարըստահարությունը և զգացվում էր իշխանուհու խելոք, արդարադատ ղեկավարության շոշափելի արդյունքը: Վասկանուշը այն կարծիքին էր, որ նախարարների մեջ հազվագյուտ է ազնիվ զգացմունքը և առաքինությունը: Նա բարվոք է համարել ծառայել ժողովրդին, քան «երթալ անիրավության և կեղեքմանց մասնակցիլ»<sup>1</sup>: Վասկանուշի հասարակական

<sup>1</sup> Սերենց, նրկեր, էջ 356:



գիտակցութիւնը խորապէս համահնչուն է Հովնանի գաղափարախոսութեանը:

Ծերենցը հասարակական գիտակցութեան նոր երանգներ է տեսնում Հռիփսիմէ տիկնոջ՝ Աշոտ Արծրունու մոր հայացքների մէջ: Տիկինը Սմբատ Բագրատունու քույրն է: Նա աչքի է ընկնում իր «հռչակավոր սրամտութեամբ, ճարտարութեամբ, բարեպաշտութեամբ»: Նրա կարծիքով իշխանութեան ամբապնդման համար պետք է հենարան դարձնել ժողովրդին: Մատնացուց անելով Հովնանին, նա ասում է. «Ով ուզեր Սասունն իրեն ունենալ՝ պետք էր Հովնանին միջնորդ ունենար»: Նա իշխաններին խորհուրդ է տալիս մոռանալ դասական խտրականութիւնները և ձեռք մեկնել շինականին: Արծրունեաց տիկնոջ, ինչպէս և Բագրատ իշխանի ձգտումն էր՝ ճանապարհներ որոնել քայքայվող նախարարական դասը պահպանելու համար:

Ծերենցի վեպերի բովանդակութիւնը, նրա ստեղծած կերպարները վկայում են, որ նա արձագանքել է ժողովրդի այն պահանջներին, որոնք երկու տասնամյակ զբաղեցրել են «արեւմտահայութեանը՝ սուլթանիզմի դեմ մղվող պայքարում: Ծերենցի վեպերին բնորոշ է նույն տենդենցը, ինչ ժամանակին բնորոշ է եղել և՛ Րաֆֆուն, և՛ մյուս վիպասաններին: Այս իմաստով հատկանշական է Րաֆֆու հետեւյալ դիտողութիւնը. «Ժամանակակից վեպի բարձր նշանակութիւնը հենց նրանումն է,—

դրել է նա, — որ վճռում է այն բոլոր հարցերը, ինչ որ փիլիսոփայությունն ու ուսումը անգոր են լինում վճռելու: Նրա մեջ քննադատվում են ամեն տիպակ հիմնարկություններ, ամեն տեսակ երկվույթներ, ինչ որ ներկայացնում է մեզ կյանքը և մարդկությունը»<sup>1</sup>:

Մերենցին մեղադրել են պատմական անցյալի մոդեռնացման մեջ: Դա մասամբ ճիշտ է: Նրա վեպերում կան հատվածներ, ուր հերոսները դատողություն են անում, դառնում հեղինակի ապրած ժամանակաշրջանի հարցերի արձանագրողներ: Սակայն անժխտելի է այն փաստը, որ թե՛ Թորոսը, և թե՛ Հովնանը մտածում և դործում են իրենց պատմական էպոխայում: Թորոսի կերպարի գեղարվեստական մշակման համար Մերենցն իր ձեռքի տակ ունեցել է նրա անձնավորությունը պարզող պատմական մի շարք նյութեր: Հովնանի կերպարը կերտելիս նա նախապես է ունեցել այդ դարաշրջանում հանդես եկած ժողովրդական ապստամբներին: Մյուս կողմից Մերենցին օգնել է ժողովրդական դյուցազնավեպը, որը ձևավորվել է հենց նույն շրջանում, Մուշում, որտեղ և ապրել է Հովնանը:

Մերենցն առաջին պատմավիպասանն է, որ քննադատական մոտեցում է հանդես բերել իր ներկայացրած նյութի որոշ սկզբնաղբյուրների նկատ-

---

<sup>1</sup> «Մշակ», 1883, № 144:



մամբ: Նրա մշակած հայացքները ֆեոդալական հասարակարգի հակասությունների, հայ նախարարների, թագավորների միջև եղած դարավոր կոնֆլիկտի, պետականության, ժողովրդի պատմական դերի, հոգեւորականության և այլ հարցերի մասին նորություն էին հայ գեղարվեստական վիպագրության մեջ: Մերենցին հիմնականում հաջողվել է ընկալել հայ ազատագրական շարժման ժողովրդական բնույթը:

Ավելին. Մերենցի վեպերը որոշ չափով տառապում են փաստագրությամբ: Ցանկանալով ամեն ինչ ասել տվյալ ժամանակաշրջանի մասին, նա շատ անգամ մի կողմ է դնում դեպքերի գեղարվեստական նկարագրությունը և պատմական փաստերը շարադրում՝ ելնելով իր գատուելություններից:

Մերենցի երկերի հիմնական ուղղությունը ուսմանտիղմն է: Մինչև նրա երկերի հրապարակ գալը Հ. Պարոնյանը «պսակազերծ էր» արել կլասիցիզմը, ինչպես և ռեալիցիոն ուսմանտիղմը գրականության մեջ, ճանապարհ հարթելով ռեալիզմի հաղթանակի համար:

Սակայն քննադատելով ուսմանտիղմը, ռեալիզմի հետևորդները, անշուշտ, նկատի չունենին ուսմանտիղմի այն նոր որակը, որ նկատելի էր Պեշիկթաշլյանի և Դուբյանի պատմական դրամաներում և այդ շրջանում հրատարակվող առանձին վեպերի մեջ:

Մերենցի ուսմանտիվմը դա այն ուսմանտիվմն է, որի հիանալի ձևակերպումը տվել է Մ. Գորկին ասելով, թե դա «ձգտում է ուժեղացնել մարդու կամքը գեպի կյանքը, նրա մեջ ընդլվում առաջ բերելու իրականության դեմ, նրա սամեն տեսակ ճընշման դեմ»<sup>1</sup>։ Այդ սկզբունքով ստեղծված կերպարները արտացոլում են պատմական ժամանակաշրջանի գաղափարները, արձագանքում ժամանակի հրատապ հարցերին։ Մերենցի վեպերի ուսմանտիկական ոգին միանգամայն նոր փայլ է տալիս հայրենասիրության և ժողովրդայնության գաղափարին։

Մերենցի ստեղծագործական մեթոդը հնարավորություն տվեց նրան գեղարվեստական նոր գույներով բացահայտելու պատմական անցյալի հասարակական կյանքի երևույթները, մարդկանց գործողություններն ու փոխհարաբերությունները։

## 9

«Երկունքից» հետո Մերենցը գրել է «Թեոդորոս Ուշտունի» վեպը։ Այստեղ նա ամփոփում է իր արտահայտած կարծիքները հայ ֆեոդալական իշխանության ներքին հալածությունների և պետականության անկման վերաբերյալ։ Զարգացնելով իր

<sup>1</sup> Մ. Գորկի, Հրապարակախոսական հոդվածներ, 1949, էջ 122։



տեսակետները ֆեոդալական կաշկանդումների վերացման անհրաժեշտութեան, ժողովրդի կյանքի բարելավման, նրա ներքին ուժերի համախմբման մասին, Մերենցը հայ ժողովրդի փրկութեան միակ երաշխիքը տեսնում է լուսավորութեան մեջ:

«Թեոդորոս Ռշտունի» վեպի գրութեան ճիշտ թվականը հայտնի չէ. այն լույս է տեսել 1881 թ. սկզբներին: Թեման վերցված է յոթերորդ դարում Հայաստանում տեղի ունեցող պատմական իրադարձություններից, երբ ռաւադատակ տալով երկիրը, Հայաստան էին ներխուժում արաբական հորդանքեր: Մյուս կողմից՝ Հայաստանը դեռևս շարունակում էր երկարատև պատերազմների թատերաբեմ մնալ Բյուզանդիոնի ու Պարսկաստանի միջև: Երկրի հասարակական կյանքում գոյութիւն ունեւր քաղաքական երկու հոսանք: Ազնւականութեան մի մասը, որ կենտրոնախույս տրամադրութիւններ ուներ, ձգտում էր երկիրը բաժանել մանր նախարարութիւնների և մտնել բյուզանդական կայսրութեան տնօրինութեան տակ: Մյուս մասը՝ հենւելով ժողովրդի վրա, աշխատում էր չեղոքացնել հունական ազդեցութիւնը և դիւանագիտական հաճաքութիւնների մեջ մտնելով արաբների հետ, ազնւանների և վրացիների օգնութեամբ՝ ապահովել երկրի անկախութիւնը:

Մանրամասնորեն նկարագրելով բյուզանդական և պարսկական տիրապետութեան բացասական ազդեցութիւնը հայ ժողովրդի կյանքում, Մերենցը

միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես դրան ավելանում էր և ներքին տիրապետող դասերի կատարած ավերածությունները: «Ինչպես բնական է ազնվատոհմությանց,—գրում է Մերենցը,—ամեն տեղ արհամարհ աչոք նայիլ հասարակ ժողովրդյան վրա և հարստահարել, նույնը սովորաբար կրենին հայոց նախարարք և ազատք»<sup>1</sup>:

Մերենցը ուսումնասիրել էր պատմական այն փաստերը, որոնք արտացոլում էին ժողովրդի քայքայման օրըստօրե խորացող պրոցեսը: «Կային ժամանակներ,— գրում է նա նույն տեղում,—ուր նախարարության ձեռքը այն աստիճան կծանրանար ժողովրդյան վրա ոսկվո և արծաթի հարկապահանջներ դնելով, որ հեղինակ մը կնամանեցնե այդ խեղճ շինականը, այսինքն ժողովուրդը «մարդու որ կրնկնի ի ծով և հնարք չի գտներ ելնելու», «հիվանդի, որ ցավեն տադնապյալ խոսելու նաև կարողություն չունի»:

Մերենցի վերջնական եզրակացությունն այն է, որ ազնվականությունը ժողովրդի թշնամին է: Նրա վերացումը միայն կարող էր ճանապարհ բանալ տնտեսական-քաղաքական կյանքի զարգացման համար: Իսկ այդ զարգացման դործում, նրա կարծիքով, կարևոր դեր կարող էր կատարել պետական այն գործիչը, որը ճիշտ է հասկանում ժողովրդի

---

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 481:



ձգտումները և ճիշտ որոշում նրա զարգացման ուղիները:

Վեպում ներկայացված Թեոդորոս Ռշտունին, հենց այդ անձնավորությունն է: Նա հայոց զբոսբերի հրամանատարն է, երկրի առաջին դեմքը պետական իշխանության բաղադրարարական պայմաններում: Մերենցը իր հերոսի մեջ դրել է այնպիսի հատկանիշներ, որոնք նրան դարձրել են ժողովրդի ձգտումների արտահայտիչը:

Նա Թեոդորոս Ռշտունու մեջ տեսնում է գծեր, որոնք նրա կարծիքով հատուկ էին իսկական ժողովրդի մարդուն: Նա արդարամիտ էր, քաջասիրտ և իր կրոնին հավատարիմ, ասում է նրա մասին Մերենցը: Եվ որ «հազվագյուտն էր՝ մեծ և պղտի նախարարաց մեջ՝ գիտեին ժողովրդյան վրա՝ անազատ և շինական ժողովրդյան վրա յուր ընկեցած գութը, որ միայն ճշմարիտ հայրենասիրություն կրնա համարվիլ»<sup>1</sup>: Թեոդորոս Ռշտունին նախարարների հետ խոսելիս անընդհատ հիշեցնում էր նրանց, որ «իրենց պարտավորությունը» ժողովրդոց հայր և պաշտպան լինելն էր և «ոչ հարստահարելը»<sup>2</sup>:

Մերենցը հայտարարում է, որ իշխանները արդարությանը դեկավարում էին ժողովրդին՝ Թորոսի խտությունից և երկյուղից դրդված: Ինչպես նախորդ վեպերի հերոսները, այնպես էլ ալատեղ

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 447:

<sup>2</sup> Նույն տեղում:

Թեոդորոս Ռշտունին հանդես է գալիս նախարարների կենտրոնախույս քաղաքականության դեմ՝ պաշտպանելով կենտրոնաձիգ իշխանության գաղափարը: «Հայ ազգի թշվառության պատճառը,—գրում է Ծերենցը նույն տեղում՝ վարդափայտում,—իր մտքերը,—զորավոր ազգային կառավարություն մը չլինելեն և նախարարաց անկոսար իշխանությունեն առաջ կուգար, որով երկրին մեջ կատարյալ անիշխանության և փոքրիկ բռնավորների կտիրեին ստրուկք և խաղալիք օտարին»: Նրա կարծիքով «խիստ կառավարության ամենեն անպիտանը, նախադասելի է անիշխանության»:

Թեոդորոս Ռշտունին վնասի կենտրոնական հերոսն է, բայց նա վնասում ավելի քիչ է կրել, քան մյուս հերոսները: Նա շարունակ գտնվում է պատերազմական զործողությունների մեջ և այն ինչին նա հասնում է՝ ավերվում և ոչնչանում է իշխանների կենտրոնախույս ձգտումների հետևանքով: Թեոդորոս Ռշտունին իր կյանքի վերջում գալիս է այն եզրակացությանը, որ բոլոր տեսակի տանջանքների մեջ ամենավատթարագույնը դերության ծանր լուծն է օտարության մեջ: «Օտարին շահասեր բարերարությունը ընտանյաց անիրավությունն վատ է»: Ծերենցի այս ակնարկը միաժամանակ արտահայտում է նրա բացասական վերաբերմունքը օտարերկրյա դիվանագիտության միջամտության հանդեպ: Մինչև վերջն էլ նա մնում է այն կարծիքին, որ միայն ժողովրդի համախմբվածությունը, նրա միասն...



կան պայքարը կարող է փրկել նրան անխուսափելի կործանումից: «Ժողովրդյան միաբանական ոգին և ուսումնարան», — ասում է նա իր գրքի վերջում, միայն դա կարող է կյանք և կենդանություն բերել ժողովրդին»:

Վեպում բավական հետաքրքիր, նույնիսկ ռեալիստական ընդհանրացումների հասնող պատկերներով, ներկայացվում են պատմական ժամանակաշրջանի համար բնորոշ մի շարք երևույթներ: Լավ են ներկայացված բյուզանդական կայսրության քայքայումն արտահայտող բարքերը, կենցաղը, մարդկային փոխհարաբերությունները, հայ ֆեոդալիզմի քայքայման հետևանքով երկրում առաջացած խժոժությունները: Այս վեպում չկան քաղաքական վերելքի այն տրամադրությունները, որոնք առկա են նրա նախորդ գործերում: «Հայկական հարցի» ձախողումը թեքում է Մերենցին դեպի պատմական դժնդակ ժամանակները, հրե դժվարությամբ էին երևում հայ ժողովրդի փրկության հույսի շողերը: Վեպի բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ անդրադառնալով ժողովրդի կեցության ծանր շրջաններից մեկին, հեղինակը ցանկացել է ասել, որ եթե մի ժողովուրդ կարողացել է հաղթահարել այդպիսի դժվարություններ, ուրեմն և կհասնի իր բաղձալի ազատությանը, եթե միայն կարողանա միավորվել և լուսավորվել:

Վեպում տեղ են գտել արկածային վիպագրության համար բնորոշ սխեմաներ, սկզբունքներ:

Վ. Փափազյանն իր «Գրականության պատմության» մեջ իրավացիորեն հիշատակում է, օրինակ, Ա. Դյումայի «Երեք հրացանակիրներ» և «Քսան տարի ետք» վեպերի ազդեցությունը:

Թեոդորոս Ռշտունու կողքին հեղինակը պատկերում է այլ կերպարներ, որոնք առանձնապես չեն առնչվում վիպական դործողությունների զարգացման հետ: Սուրեն Կամսարականը, որն իր հայրենասիրությամբ պետք է որ դորավիզ դառնար Ռշտունուն, շատ շուտով դերի է ընկնում, ենթարկվում բազմապիսի արկածների և միայն վերջում վերադառնում հայրենիք: Նույնը կատարվում է Գրիգոր Մամիկոնյանի հետ: Վեպի հետաքրքիր կերպարներից է Գրիգոր Մամիկոնյանի թիկնապահ Զավենը, որ հետապնդում է բյուզանդական զորավարներից Թումային, Մամիկոնյան տան կրտսեր դստերը գերութունից ազատելու և հայրենիք վերադարձնելու համար:

Արևնելով նախորդ վեպերում ներկայացված կանացի կերպարների հիմնական դժերը, Մերենցը գտնում է, որ ազատորեն կարելի է նրանց ձեռքը տալ ոչ միայն հայրենական տան, այլև ժողովրդի ղեկավարման դործը: Թեոդորոս Ռշտունին շինականներից լսելով Մամիկոնյան իշխանուհու գովքը, ասում է. «Քիչ քիչ ինձ համողմունք կդառնա; թե մենք երջանիկ ընկելու համար ժողովուրդը, կանանց պետք է հանձնենք երկրին կառավարությունը և միայն պատերազմով դբաղինք, միայն եթե այն



ևս կարողանայինք հաջողութեամբ գլուխ հանել»<sup>1</sup>։

Մերենցի սղգական Մելիք Աղարշանների ընտանիքի շառավիղներից մեզ է հասել հեղինակի արխիվի մի մասը. այն սլարոնակում է նրա օրագրերից, հուշերից մի շարք հատվածներ, սևագիր տետրակներ և հատուկներ նամակներ։ Հեղինակի թղթերի հետ մեզ է հասել նաև դատեր՝ Թագուկի գրած նամակները Կիպրոսից, թարգմանական մի շարք հատվածներ և մի վեպ, որի վրա կա հոր սրբտահույզ մակագրութիւնը։ Երվանդ Օտյանը և Ա. Արփիարյանը շերտ խոսքեր են գրել Թագուկի մասին, զնահատել նրա գեղագրական շնորհքը, հոր նկատմամբ ունեցած նվիրական զգացմունքները։ Աղջկա նամակներից, ինչպես և հոր հուշերից երեւում է, որ Թագուկը մեծ ազդեցություն է ունեցել հոր վրա։ Իր հերոսուհիների քնքուշ հոգու, վառ հայրենասիրութեան, նվիրվածութեան կենդանի արտահայտութիւնը նա տեսել է իր աղջկա մեջ։

«Թորոս Լեոնիի» տպագրութիւնից հետո ըստացված տարբեր արձագանքների • կապակցութեամբ աղջիկը գրում է, որ վեպում նկատված լեզվական սալթաքումներն ու հապճեպութիւնը մեծ մասամբ առաջացել է նրանից, որ ինքը շտապեցրել է նրան, առանց վերանայման ձեռագիրը ուղարկել տպագրութեան։

1879 թվականի փետրվարին Թագուկը ամուսնանում է։ Մերենցը ավարտելով երրորդ վիպը, ըս-

<sup>1</sup> Մերենց, Երկեր, էջ 449։

կըսում է շրջել պատմական Հայաստանում: 1880 թվականին Արևմտահայաստանում սկըսվում է նով, որին հետևում են հիվանդությունները, կազմվում է «Սովեկոց» խնամատար հանձնաժողով: Ծերենցը որպես բժիշկ գնում է Վան, Ալաշկերտ, Բասեն և ականատես լինում ծանր տեսարանների:

1881 թվականին «Մեղու Հայաստանի» օրագրքում նա տպագրում է «Թրոթը և հայկական խընդիրը» վերնագրով հոդվածը: Այստեղ նա մերկացնում է էրզրումի անդլիական հյուպատոսի հերյուրանքները հայերի հասցեին, ինչպես և նրա արտահայտած այն միտքը, թե Հայաստանը լոկ «աշխարհազրական հասկացողություն է»: Ծերենցը ցավով է նշում, որ հանցավորը իրենք՝ հայերն են: «Բուլղարները, որ խեղճ էին թվում, համառ կերպով հասան իրենց ազատության, իսկ հայկական հարցը չլուծվեց»: Բերում է մի շարք օրինակներ ապացուցելու, որ հայերը Թուրքիայում շարունակում են մտածել իրենց ազատության մասին, բայց, իհարկե, ոչ անդլիացիների օգնությամբ: «Հայկական խնդիրը» վերնագրով հոդվածում նա կոչ է անում կուլ չգնալ ռեակցիային, ուժեղացնել բնկերությունների, միությունների կազմակերպման գործը, պահպանել ազգը՝ պայքարի ուժեր կուտակելու համար:

1883 թվականին Ծերենցը գնում է Պոլիս, այնտեղից Փարիզ, ապա նորից Պոլիս: Պոլսում նա



ակտիվ մասնակցութիւն է ունենում Խրիմյան Հայ-  
րիկի կաթողիկոսական թեկնածութեան պաշտպա-  
նութեան գործին:

1885 թվականին մեռնում է Մերենցի աղջիկը,  
թողնելով երեք երեխա: Շատ շանցած վշտահար-  
հայրը կաթված է ստանում: Թագուկի մահից հետո  
նա գրել է կենսագրական նոթեր, որտեղ մորմոք-  
ված սրտով խոսում է իր կյանքի տառապանքների  
և կրած դժվարութիւնների մասին: Սրտահուշ  
խոսքեր կան այդ նոթերի մեջ իր դստեր դժբախտ  
ճակատագրի վերաբերյալ: Իր այդ նոթերում նա  
արտագրում է Թագուկի ոտանավորներից մեկը,  
որով նա հուսադրում էր հորը, հորդորում հակա-  
ռակորդի դեմ շրնկձվել և մինչև վերջ տանել պայ-  
քարը: Աղջիկն ասում է, որ հայրը պետք է «վառ  
պահի սրտի անշեջ վառարանը», որպէսզի կարո-  
ղանա «բանի մը կայծ» տալ աղգին:

Բայց մանավանդ ինձ համար գրե,  
ինձ որ բո ձեռք ու գրիչ կսիրեմ,  
ինձ որ զգացմունքդ է սիրտս կհնչե,  
ինձ որ բո միտք ու խոսք պաշտեմ:

Հավտա աղջիկդ կըրուցե,  
Որ դուխդ թեպետ կճերմակեն,  
Բայց նշնավույն կնմանի,  
Ու ծաղիկդ պտղաբերե՞լ:

1 Այս բանաստեղծութիւնն ամբողջութեամբ տպագրվել  
է «Ներկունք Թ դարու» 1895 թվականի հրատարակութեան  
ստաջարանում:

Կյանքի վերջին տարիներին գրած նոթերի մեջ  
 վշտահար ծերունու արտահայտած զգացմունքնե-  
 րը, անձնական տվյալտանքները, մտորումները աշ-  
 խարհի, մարդկանց մասին, միաժամանակ արտա-  
 հայտում են կյանքի մեջ փորձությունների ապրած  
 մարդու հոգու արիությունը, հավատը, հույսը  
 ապագայի նկատմամբ։ Առանձնապես հետաքրք-  
 րի է 1885 թվականին «Անյցալ հիշատակ ծերուն»  
 վերնագիրը կրող նոթերից մեկը, որտեղ նա նկա-  
 րագրում է իր ճանապարհորդությունը Թիֆլիսից  
 էջմիածին։ Ճանապարհին նա հիանում է Հայաս-  
 տանի բնությամբ, սքանչելի Սեանով։ Հիշում է  
 Աշոտ Երկաթի ժամանակները, Բեշիր ոստիկանի  
 բռնությունները և Գևորգ Մարգարիտունուն։ Պատ-  
 մական հուշերը հուզում են ծերունուն։ Նա զար-  
 մանքով նկատում է, թե ինչպես ժամանակակից  
 քաղաքակրթված հվրոպական ազգերը մի կողմից  
 մեծ խնամքով հավաքում, պահպանում են «հնա-  
 գույն նշխարքները», մյուս կողմից թույլ տալիս  
 մարդուն մարդ հռչակել, ոչնչացնել նրա սրբու-  
 թյուններն ու հիշատակները։ «Սպասենք, որ հասնի  
 ան օրը,—գրում է նա իր այդ նոթերի մեջ,—և ան-  
 շուշտ պետք է հասնի, մարդակերություն հետք  
 ջնջվի և այն որ քաղաքականության բարձրությունը  
 պիտի հարգե տառապյալ և նկուն ազգաց մնացորդ-  
 քը, պիտի նկատե, որ նոքա ևս շնչին, նոքա ևս արե-  
 վուն տակ կարենան գլուխնին բարձրացնել մարդ-



կանց աղգաց, իշխանությանց և զորությանց առ-  
ջև, շամաշեն Ըսել թե հայ են, հրեա են, ասորի են»<sup>1</sup>։

Ծերենցը մինչև վերջը չի հրաժարվում այն  
մտքից, որ ազգը իր գոյությունը կարող է պահպա-  
նել «բարոյական լուրջ դաստիարակության» մի-  
ջոցով։ Նրա կարծիքով, եթե հայ եկեղեցու սպա-  
սավորները կրթվեին, նրանք ի վիճակի կլինեին  
դեռ մի երկու դար օգնել հայությանը, նրա միաս-  
նության ստեղծման, պահպանման և քաղաքական  
կյանքի զարգացման գործում։

Սակայն այդ խոհերն ու դատողություններն  
այդ օրերին Ծերենցի մոտ հնչում էին արդեն որ-  
պես կյանքի ճանապարհները կորցրած վաղեմի  
լուսավորչի հնացած հայացքներ։

Իր կյանքի վերջին օրերին Ծերենցը «Արաքս»  
հանդեսի խմբագրությանն է ուղարկում մի նա-  
մակ, որը տպագրվում է նրա մահից հետո։ Խոսե-  
լով հանդեսի հրատարակության նպատակների  
մասին, նա անդրադառնում է իր սերնդի գործու-  
նեությունը և հետևյալ ձևով բնութագրում այն. «Մի-  
այն ոմանք պիտի պատասխանեն, թե մեր պաշտո-  
նըն է մտրակել, ուժակոծել, քանդել ամենայն ինչ,  
որ կա հայ ազգի մեջ և այդ կործանմանց և ավերա-  
կաց վրա կանգնիլ նոր և փառավոր շինքը, որ մենք  
կերևակայենք արդար և ուղիղ։ Մենք վերանորո-  
գիչք ենք բարոյականի, որովհետև մոլորությունք

<sup>1</sup> ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 22 (I տետր), էջ 5։

մարդկային բնկերության անհանգուրժելի են և առաքինասիրության: Քանի քանի տարիներ են, որ մենք գրչով և մեր կենաց օրինակով կաշխատինք այս ազգը բարոյականացնել իրեն ամեն առավոտ քարոզելով, թե նախապաշարմունքներեն պետք է թոթափել, վտարել: Բայց մեր այսչափ տարիներու ջանքը անօգուտ եղավ: Ասացինք ամեն դասու մարդկանց և մեղ չլսեցին ոչ քաղաք, ոչ գյուղ ականջ չունեցան մեր անշահասեր ձայնը լսելու և կշարունակեն մութ նախապաշարմանց տղմին մեջ լողալու... Նոր սերունդը տողորջալ հին դադափարներով չի կրցավ հասկնալ, թե նա հայրենի տնեն սկսելու է վերանորոգել»<sup>1</sup>:

Ծերենցը մինչև իր կյանքի վերջը մնաց ֆեոդալական մնացորդների և տիրապետող դասերի բռնությունների ու անարդ շահագործման թշնամի, երազեց աշխատավոր ժողովրդի կյանքի բարօրությունը և լուսավորությունը, իր հայրենիքի վերջնական ազատագրումը:

1 «Արաքս», 1888, գիրք Բ, էջ 158:





Ռուզան Պավելի Նանուկյան  
Рузан Павловна Нанумян

Ծ Ե Ր Ե Ն Ց

Պատ. խմբ. Կ. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ  
Հրատ. խմբ. Ա. Հ. ՇԱՀԴԱՄՅԱՆ  
Նկարչական ձևավորումը Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ  
Տեխն. խմբադիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ  
Սրբադրիչ՝ Զ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 00560 Հրատ. 1961, պատվեր 186, խշխ 683, արած 1500

Հանձնված է արտադրության 13/II 1961 թ.: Ստորադրված է տպագրության 22/VIII 1961 թ.: Թուղթ՝  $70 \times 92^{1/16}$ : Տպագրական 7,32 մամուլ+1 ներդիր, հրատ. 3,23 մամուլ: Գինը 13 կոպ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան,  
Երևան, Բարեկամության, 24:





ԱԼԵՔ. ԻՊ. Լ.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ        | Տող |        | Տպված է             | Պետք է լինի            |
|-----------|-----|--------|---------------------|------------------------|
|           | վ.  | ն.     |                     |                        |
| 22<br>114 | —   | 8<br>2 | մխտնաբաղան<br>շնչին | մխտնաբաղան<br>շունչ են |

121

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035345

A 1794